ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

Սովետական Հայաստան

ՕՐԳԱՆ ՀԿ(Բ)Պ ԿԵՆՏԿՈՄԻ, ԵՐԿՐԱԿԱՆ ՄԻՈՒ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՈՒ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ ՍՈՎԵՏՆԵՐԻ

ОРГАН ЦК, ЕК КП(б)А И СОВЕТОВ ДЕПУТАТОВ ТРУДЯЩИХСЯ АРМ. ССР

21-ՐԴ ՏԱՐԻ

ՓԵՏՐՎԱՐԻ 16 ԿԻՐԱԿԻ 1941 Թ.

№ 39 (6148)

ԳԻՆԸ 10 ԿՈՊԵԿ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ, ԶԻՆՎԱԾ 18-ՐԴ ՊԱՐՏԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ, ՍԻՐԵԼԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՄԵԾ ՍՏԱԼԻՆԻ ԻՄԱՍՏՈՒՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ, ՀԱՂԹԱԿԱՆՈՐԵՆ ԱՌԱՋ ԿԳՆԱՆ ԴԵՊԻ ԿՈՄՈՒՆԻԶՄԻ ՆՈՐԱՆՈՐ, ՓԱՅԼՈՒՆ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ

ԼԵՆԻՆԻ-ՍՏԱԼԻՆԻ ԴՐՈՇԻ ՆԵՐՔՈ

„ՊՐԱՎԴԱ"-ՅԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի ԱՌԱՋՆՈՐԴՈՒՄԸ

Այսօր սկսում է իր աշխատանքը բոլշևիկների Համամիութենական Կոմունիստական պարտիայի 18-րդ կոնֆերանսը: Կոնֆերանսի օրակարգում դրված հարցերը պատմական հսկայական նշանակություն ունեն: Սոցիալիստական արդյունաբերությունը ԱԱՌՄ-ի ժողովրդական տնտեսության ամրողջ սիստեմի բաղադրիչ է, գլխավոր դեկավար հիմունքը: Մեր հայրենիքի հզորության հետագա ամրացումը կախված է սոցիալիստական արդյունաբերության և տրանսպորտի անընդհատ զարգացումից:

Սովետական հայրենասերների համար տարակիցիա է դարձել՝ բոլշևիկյան պարտիայի կյանքի, սովետական երկրի կյանքի աչքի ընկնող իրադարձությունները դիմավորել արտադրական նոր նվաճումներով, տնտեսական պլանների կատարումով և գերակատարումով: Դա բոլշևիկյան լավ տարադիցիա է, դեպի Լենին-Ստալինի պարտիան սովետական ժողովրդի տածած սիրո արտահայտություններից մեկը, մի ապացույց, որ աշխատավորները պատրաստ են այսուհետև ևս անդուլ կերպով զարգացնել Սովետական Միության սոցիալիստական տնտեսությունը, բարձրացնել նրա պաշտպանական հզորությունը:

Բոլշևիկյան պարտիան անսահման վստահություն է վայելում սովետական ժողովրդի մեջ: Աշխատավոր մասսաները բոլշևիկյան պարտիան համարում են իրենց պարտիան, մերձավոր ու հարազատ. նրանք պարտիայի բոլոր ձեռնարկումների մեջ տեսնում են իրենց կենսական շահերի, սոցիալիստական պետության շահերի մարմնավորումը: Ահա թե ինչու Համկ(բ)Պ 18-րդ կոնֆերանսի հրավիրման լուրն ընդունվեց մասսաների ստեղծագործական ակտիվության նոր վերելքով: Մեր ամրողջ մեծ երկրով մեկ է պատիվ 18-րդ պարտիական կոնֆերանսի տարածվեց սոցիալիստական մրցության հզոր ալիքը: Ամենուրեք, որտեղ սոցիալիստական եռուն շինարարություն է կատարվում, որտեղ ապրում և աշխատում են սովետական մարդիկ, կոնֆերանսի բացման օրվան նվիրներ էին պատրաստում հայրենիքի և պարտիայի համար:

Մի շարք խոշորագույն արդյունաբերական ձեռնարկություններում է պատիվ Համկ(բ)Պ 18-րդ կոնֆերանսի ծավալված մրցության արդյունքներին վերաբերող նյութերը, որ հրապարակվում են «Պրավդա»-յի այսօրվա համարում, ցույց են տալիս աշխատանքի սոցիալիստական մեթոդների հզոր ուժը, վկայում են, որ սովետական ժողովուրդը պատրաստ է անձնվիրաբար պայքար մղել կոմունիզմի նորանոր հաղթանակների համար: Այսօր մրցության առաջավորները բերկրանքով հայտարարում են պարտիային, ընկեր Ստալինին, որ իրենց խոսքը պահել են, իրենց պարտավորությունները կատարել են: Օրինակ՝ Ադրբեջանի նավթագործները պարտավորվել էին մինչև կոնֆերանսի բացման օրը նավթի ու գազի հանույթի պլանի կատարումը հասցնել 104,5 տոկոսի: Այդ պարտավորությունը իրագործվեց: Նավթի և գազի հանույթի մեկ և կես տարվա ծրագիրը ժամկետից առաջ կատարվեց: Բոլշևիկորեն կատարեցին իրենց պարտավորությունները Կուզբասի հանքագործները՝ ամզանի բոլոր տրեստները ածխի հանույթի պլանը կատարում ու գերակատարում են: Իրենց պարտավորությունները հաջողությամբ կատարած ձեռնարկությունների թվումն են Մոսկվայի, Լենինգրադի, Կիևի, Դոնբասի և երկրի այլ շրջանների մի քանի տասնյակ խոշորագույն գործարաններն ու կոմբինատները: Ի պատիվ Համկ(բ)Պ 18-րդ կոնֆերանսի ծավալված մրցության արդյունքները մի անգամ ևս հաստատում են, որ սոցիալիզմի երկրի աշխատավորների խոսքը գործից չի բաժանվում:

Լայնորեն ծավալված սոցիալիստական մրցության ընթացքում աճեցին և աչքի ընկան սոցիալիստական արդյունաբերության նորանոր առաջնորդներ, առաջավորներ: Նրանք տուն են տալիս ամրողջ աշխատանքին, ցույց են տալիս բարձր արտադրական աշխատանքի օրինակներ, առաջ են շարժում հետ մնացողներին: Մի չդիտե այժմ Կրիվորոժյեյի ավազանի բազմահանքախոշորային նոր մեթոդի նախաձեռնող Ալեքսեյ Սեմիվոլոսի անունը: Այդ զարմանալի նավատորը երեկ, ի պատիվ 18-րդ պարտիական կոնֆերանսի, սահմանեց աշխատանքի արտադրողականության աչքի ընկնող ռեկորդ՝ մի հերթափոխության ընթացքում Ալեքսեյ Սեմիվոլոսը առաջադրանքը կատարեց 2·432 տոկոսով: Այսպես են դիմավորում մեր երկրի առաջավոր մարդիկ կոնֆերանսի բացման օրը:

Սոցիալիստական մրցության ուժն այն է, որ նա հետ մնացողներին քաշում է դեպի առաջավորների մակարդակը, աշխատանքի նոր հերոսներ է ծնում, նրանց հնարավորություն է տալիս ցույց տալու իրենց ընդունակությունները: Ալեքսեյ Սեմիվոլոսի մեթոդը Կրիվորոժյեյից անցավ Ուրալի պղնձահանքերը: «Կրասնոզվարդեյսկայա» հանքահորում շարքային գայլիկոնող Իլլարիոն Ցանկինը, տիրապետելով սեմիվոլոսյան մեթոդին և հարստացնելով վերջինս սեփական ստեղծագործությամբ, բաժին դնելով դերաղանցեց պղնձահանքի հանույթի մինչև այժմ գոյություն ունեցող ռեկորդները: Հրապարակ եկան նաև Ցանկինի հետևորդներ: Նրանց սկսեցին հետևել Զելյաբինսկի մարզում, Ղազախստանում, Հայաստանում, Բաշկիրիայում, Հեռավոր Արևելքում: Դոնբասում, հռչակվելով իրենց ռեկորդներով, աչքի ընկան հանքահատ Նիկոլայ Կրավցովը, գայլիկոնող Պյոտր Մալինովսկին, Սինյագովսկին, գայլիկոնող մեքենաների վարպետներ Սիմոնովը և Ռոժկովը, ամրացնողներ Իվանցովն ու Զիլենկոն և ուրիշ հարյուրավորներ:

Ի պատիվ 18-րդ պարտիական կոնֆերանսի տեղի ունեցող սոցիալիստական մրցությունը դարձավ արդյունաբերության և գյուղատնտեսության նորանոր հաջողությունների աղբյուր: Շատ գործարաններ, հանքահորեր, նավթահանքեր լարեցին իրենց ուժերը, տվեցին երկրին իրենց պարտքը և մտան սոցիալիստական արդյունաբերության առաջավոր ձեռնարկությունների շարքերը: Բոլոր պայմանները կան այդ հաջողություններն ամրացնելու, և առանց տեմպի թուլացման, առաջ շարժվելու համար:

Սոցիալիստական մրցության հզոր վերելքն ընդգրկեց նաև կոլխոզային գյուղը: Հազարավոր կոլխոզներ և սովխոզներ Համկ(բ)Պ Համամիութենական 18-րդ կոնֆերանսը դիմավորում են լուրջ հաջողություններով գարնանացանի նախապատրաստման ասպարեզում, ապնիվ և անձնուրաց աշխատանքով ամրացնում են հանրային տնտեսությունը, ամուր հիմքեր են դնում 1941 թվականին բարձր բերքի համար:

1940 թվականը ամրողջապես վերցրած արդյունաբերության և տրանսպորտի համար լուրջ հաջողությունների տարի էր, սոցիալիստական արդյունաբերության արտադրանքի հետագա աճման տարի: Բոլշևիկյան պարտիայի, սովետական կառավարության, պարտիայի ու ժողովրդի սիրելի առաջնորդ և ուսուցիչ ընկեր Ստալինի անդուլ հոգատարության շնորհիվ, մի քայլ ևս արվեց Ստալինյան Երրորդ Հնգամյակի ուրվագծած պատմական խնդիրների իրագործման ճանապարհին: Արդյունաբերական արտադրանքի 11 տոկոսի աճ՝ 1939 թվականի հանդեպ—այս է 1940 թվականի հանրագումարը: Ահա է սոցիալիստական արդյունաբերության և տրանսպորտի վերելքը: Այդ վերելքում, մանավանդ անցած տարվա վերջին ամիսներին լուրջ դեր խաղացին այն ձեռնարկումները, որոնք գործադրեցին պարտիան և կառավարությունը աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու համար, աշխատանքային կարգապահությունն ամրացնելու համար:

Աշխատավոր մասսաներն իրենց հաչիվ են տալիս, որ շնորհիվ իրենց սեփական հզոր ինդուստրիալ բազայի ստեղծման, որը վերացրեց ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերը, սովետական երկիրը, սովետական ժողովուրդը կարող է հարաճուն չափով օգտվել սոցիալիստական հասարակակարգի բարիքներից: Նրանք իրենց հաչիվ են տալիս, որ մեր հաջողություններն ավելի զգալի կլինեին, եթե արդյունաբերության բոլոր ճյուղերը և յուրաքանչյուր առանձին ձեռնարկություն կատարեին իրենց պլանները, եթե բոլոր գործարաններն ու ֆաբրիկաները, հանքահորերն ու հանքավայրերը աշխատեին այնպես, ինչպես պահանջում են Սովետական Միության շահերը:

Բոլշևիկները գիտեն զգաստ կերպով գնահատել և կշռել իրենց հաջողությունները: Հաջողությունները գլխապտույտ չեն առաջացնում բոլշևիկների մեջ, չեն օրորում, չեն թուլացնում պայքարը շարունակելու կամքը: Ինքնահավանությունը և գոռոզությունը, ինքնահանգստացումը և ինքնագոհությունը օրգանական խորթ են բոլշևիկներին, որոնք գիտեն տեսնել իրենց հաջողությունները նույնքան լավ, որքան և թերությունները: Ընկեր Ստալինը պարտիային, սովետական ժողովրդին, մեծ և փոքր դեկավարներին սովորեցնում է՝ կանգ չառնել ձեռք բերվածի վրա, այլ առաջ գնալ, նորանոր դիրքեր նվաճել:

Արդյունաբերության և տրանսպորտի աշխատանքում դեռ բավականաչափ խոշոր թերություններ կան: Դրանք չեն կարող հանդուրժելի լինել մեր պայմաններում: Մի՞թե լավ տնտեսավարները, պարտիական աշխատողները կարող են հաշտվել դեպի ժողովրդական ունեցվածքը ցուցաբերվող անհոգ վերաբերմունքի հետ, արդյունաբերության մեջ հաչվառման թերությունների հետ, նյութական արժեքների վատնման հետ, թանկագին ժամանակի կորուստների հետ, արտադրության ոչ բարձր կուլտուրայի հետ: Բայց մեզ մոտ դեռ քիչ չեն այնպիսի դեկավարներ, որոնց համար ոչ մի նշանակություն չունի վատորակ արտադրանք տալը, տեխնոլոգիական ռեժիմը խախտելը, որոնց համար արտադրության մեջ եղած կեղտոտ սովորական բան է, զրահանությունը արտադրական պլանների կատարման հիմնական մեթոդն է:

Արդյունաբերության և տրանսպորտի ասպարիզում պարտիական կազմակերպությունների կատարելիք աշխատանքի հարցերը, որոնք դրված են 18-րդ պարտիական կոնֆերանսի օրակարգում, բացառիկ կարևոր նշանակություն ունեն Համկ(բ)Պ 18-րդ համագումարի առաջադրած հոյակապ խնդիրների հաջող կատարման գործում:

Համկ(բ)Պ 18-րդ համագումարը հուչակեց անդասակարգ սոցիալիստական հասարակության կառուցումն ավարտելու և սոցիալիզմից ստիհանարար կոմունիզմին անցնելու ծրագիրը: Համագումարում ամփոփվեցին մեր երկրում սոցիալիզմի համաչխարհային պատմական հաղթանակների արդյունքները: 18-րդ համագումարում ընկեր Ստալինը ձեվակերպեց ներքին քաղաքականության ասպարիզում պարտիայի ունեցած կարևորագույն խնդիրներից մեկը՝ «Էլ ավելի ծավալել մեր արդյունաբերության վերելքը, աշխատանքի արտադրողականության աճումը, արտադրության տեխնիկայի կատարելագործումն այն նպատակով, որպեսզի այն բանից հետո, երբ արդեն առաջ ենք անցել կապիտալիստական գլխավոր երկրներից արդյունաբերության տեխնիկայի և արդյունաբերության տեմպերի բնագավառում,— նրանցից առաջ անցնենք նաև տնտեսապես մոտակա 10—15 տարիների ընթացքում»:

Այդ խնդրի իրագործման մեջ Համկ(բ)Պ Համամիութենական 18-րդ կոնֆերանսը պատմական դեր է խաղալու: Նրա որոշումները սովետական ժողովրդին ցույց կտան սոցիալիստական արդյունաբերության ու տրանսպորտի հետագա վերելքի ուղիները, կապահովեն սոցիալիստական պետության հզորության հետագա ամրացումը: Լենին-Ստալինի պարտիայի դեկավարությամբ, մեր ժողովուրդը, զինված Համկ(բ)Պ Համամիութենական 18-րդ կոնֆերանսի որոշումներով, առաջ կգնա դեպի կոմունիզմի նորանոր հաղթանակները:

Կեցցե՛ բոլշևիկյան մեծ պարտիան:

Կեցցե՛ Համկ(բ)Պ Համամիութենական 18-րդ կոնֆերանսը:

ՍՈՒԲՍՏՐԱՏՈՍՏԱՏԸ 11,700 ՄԵՏՐ ԲԱՐՁՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՕԴԱԳՆԱՑՆԵՐ Ա. ՖՈՄԻՆԻ ԵՎ Գ. ԳՈԼ ԻՇԵՎԻ ԱՂՋԻ ԸՆԿՆՈՂ ԹՌԻՉՔԸ

Սովետական օդագնացներ Ալեքսանդրը Ֆոմինը և Գեորգի Գոլիշևը, որոնք հունվարի 17-ին սուբստրատոստատի միջոցով հասել էին մոտ 11.000 մետր բարձրության, փետրվարի 13-ին մի նոր աչքի ընկնող թռիչք կատարեցին դեպի ստրատոսֆերա: Այս անգամ նրանք նույնպես բարձրացան ուտենու ոստերից հյուսած զամբյուղով: Գոնդոլը առավելագույն չափով թեթևացնելու համար, նրա մեջ դրված էին միմիայն պողպատե 3 բալոն խտացրած ածխածնով և դիմադրության էլեկտրական տերմոգրաֆ:

Երեկոյան ՍՍՌՄ Հիդրոօդերևութաբանական սպասարկման գլխավոր վարչությունը մի հեռագիր ստացավ սուբստրատոստատի անձնակազմից: Հեռագրում ասված էր՝ «Լայրէջը հաջող կատարվեց ժամը 15-ից 41 րոպե անց Իվանովոյի մարզի Գոռա-Խրուսալնի շրջանի Դուդոր գյուղի մոտ: Բարձրությունն ըստ գործիքի՝ 11.700 մետրը էր: «Առաստաղոտ» մնացինք 20 րոպե: Ջերմաստիճանն 9-ից իջավ 56 աստիճանի զերոյից ցածր: Գործիքները լավ էին աշխատում: Առավելագույն բարձրության վրա լավ էինք զգում: Առաջադրանքը կատարված է»:

(ՏԱՍՍ)

ՀԱՄԿ(Բ)Պ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ 18-ՐԴ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ

ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԳԻՐԸ

Երեկ Կրեմլի Պալատի Մեծ դահլիճում սկսեց իր աշխատանքը Համկ(բ)Պ Համամիութենական 18-րդ կոնֆերանսը:

Նիստը սկսվելուց դեռ շատ առաջ դահլիճում հավաքվում են կոնֆերանսը դելեգատները և հյուրերը՝ պարտիական, սովետական, տնտեսական և զինվորական աշխատողները, մայրաքաղաքի գործարանների ու ֆաբրիկաների ստախանովականները: Կոնֆերանսում լայնորեն ներկայացված են արդյունաբերական խոշորագույն կենտրոնների և տրանսպորտային կարևորագույն հանգույցների, այդ թվում՝ Ստալինյան Հնգամյակների տարիներին առաջ եկած նոր ինդուստրիալ կենտրոնների պարտիական կազմակերպությունները:

Դելեգատների մեջ Լատվիական, Լիտվական, Էստոնական, Կարելո-Ֆինական և Մոլդավական նոր Միութենական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների կոմունիստական պարտիաների ներկայացուցիչները:

Ժամը 18-ին դահլիճում երևում են ընկերներ Ի. Վ. Ստալինը, Վ. Մ. Մոլոտովը, Կ. Ե. Վորոշիլովը, Մ. Ի. Կալինինը, Լ. Մ. Կագանովիչը, Ա. Ա. Անդրեևը, Ա. Ա. Ժդանովը, Ա. Ի. Միկոյանը, Ն. Ս. Խրուշչևը, Լ. Պ. Բերիան, Ն. Մ. Շվերնիկը, Գ. Մ. Մալենկովը:

Դելեգատները և հյուրերը բացառիկ խանդավառությամբ են դիմավորում ընկեր Ստալինին և նրա զինակիցներին՝ պարտիայի և կառավարության դեկավարներին: Բոլորը ոտքի են կանգնում: Մի քանի բոպե է տևում հուժկու օվացիան և ողջույնի բացականչությունները դի պատիվ ընկեր Ստալինի, ի պատիվ Համկ(բ)Պ լենինյան-ստալինյան կենտրոնական Կոմիտեի:

— Կեցցե՛ ընկեր Ստալինը:

— Մեծ Ստալինին ուռա՛:

Ընկ. Ա. Ա. Ժդանովը, պարտիայի կենտրոնական Կոմիտեի հանձնարարությամբ, Համկ(բ)Պ Համամիութենական 18-րդ կոնֆերանսը հայտարարում է բացված:

Կոնֆերանսի ընտրովի օրգանների կազմի մասին առաջարկություն անելու համար խոսքը տրվում է Համկ(բ)Պ Մոսկվայի Կոմիտեի և Մոսկվայի Քաղաքային Կոմիտեի քարտուղար ընկ. Ա. Ս. Շչերբակովին:

Դելեգացիաների ներկայացուցիչների խորհրդի հանձնարարությամբ, ընկ. Շչերբակովն առաջարկում է ընտրել Նախագահություն 38 մարդուց: Այդ առաջարկը կոնֆերանսը ընդունում է:

Երբ ընկ. Շչերբակովը, անցնելով Նախագահության անձնակազմին, տալիս է ընկեր Ստալինի անունը, դահլիճում նորից օվացիա է սկսվում: Բոլորը ոտքի են կանգնում, ջերմագին ողջունելով պարտիայի և սովետական ժողովրդի մեծ առաջնորդին: Բուռն ծափահարություններով են դիմավորում պարտիայի և կառավարության ղեկավարների՝ ընկերներ Մոլոտովի, Վորոշիլովի, Կալինինի, Կագանովիչի, Անդրեևի, Ժդանովի, Միկոյանի, Խրուշչևի, Բերիայի, Շվերնիկի, Մալենկովի անունները:

Նախագահությունը, Քարտուղարությունը և Մանդատային Հանձնաժողովը ընտրվելուց հետո, կոնֆերանսը հաստատում է օրակարգը և ռեգլամենտը:

Նախագահող ընկ. Ա. Ա. Ժդանովը օրակարգի առաջին հարցի մասին զեկուցելու համար խոսքը տալիս է Համկ(բ)Պ Կենտկոմի քարտուղար ընկ. Գ. Մ. Մալենկովին, որին կոնֆերանսի դելեգատները դիմավորում են բուռն ծափահարություններով: Ընկ. Մալենկովի զեկուցումը լսում են չթուլացող ուշադրությամբ:

Դրանով Համկ(բ)Պ Համամիութենական 18-րդ կոնֆերանսի առաջին նիստը վերջանում է:

Կոնֆերանսի հաջորդ նիստը նշանակված է փետրվարի 17-ին, ցերեկվա ժամը 11-ին:

(ՏԱՍՍ)

ՀԱՄԿ(Բ)Պ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ 18-ՐԴ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՕՐԱԿԱՐԳ

1. Պարտիական կազմակերպությունների խնդիրները արդյունաբերության և տրանսպորտի բնագավառում— զեկուցող ընկ. ՄԱԼԵՆԿՈՎ:
2. 1940 թվականի տնտեսական արդյունքները և ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1941 թվականի պլանը— զեկուցող ընկ. ՎՈԶՆԵՍԵՆՍԿԻ:
3. Կազմակերպական հարցեր:

ՀԱՄԿ(Բ)Պ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ 18-ՐԴ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ

1. ԱԼԵՄԱՍՈՎ Ա. Մ.
2. ԱՆԴՐԵԵՎ Ա. Ա.
3. ԱՆՈՇԻՆ Ի. Ս.
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳՐ. Ա.
5. ԲԱԼԻՐՈՎ Մ. Դ.
6. ԲԵՐԻԱ Լ. Պ.
7. ԲՈՐՈԴԻՆ Պ. Դ.
8. ԲՈՒՐՄԻՍՏԵՆԿՈ Մ. Ա.
9. ՎԱԳՈՎ Ա. Վ.
10. ՎՈՐՈՇԻԼՈՎ Կ. Ե.
11. ԺԴԱՆՈՎ Ա. Ա.
12. ԿԱԳԱՆՈՎԻՉ Լ. Մ.
13. ԿԱԼԻՆԻՆ Մ. Ի.
14. ԿԱԼՆԵԲԵՐԶԻՆ ՑԱ. Է.
15. ԿՈՒԶՆԵՑՈՎ Ա. Ա.
16. ԿՈՒԲԻՐԻՑԱՆՈՎ Գ. Ն.
17. ԿՈՒՈՒՍԻՆԵՆ Օ. Վ.
18. ԿՈՐՆԻԵՑ Լ. Ռ.
19. ՄԱԼԵՆԿՈՎ Գ. Մ.
20. ՄԻԿՈՅԱՆ Ա. Ի.
21. ՄԻԽԱՅԼՈՎ Ն. Ա.
22. ՄՈԼՈՏՈՎ Վ. Մ.
23. ՆԻԿՈԼԱՅԵՎԱ Կ. Ի.
24. ՊՈՆՈՄԱՐԵՆԿՈ Պ. Կ.
25. ՊՐՈՏՈՊՊՈՊՈՎ Դ. Զ.
26. ՍԿՎՈՐՑՈՎ Ն. Ա.
27. ՄՆԵՋԿՈՒՍ Ա. ՑՈՒ.
28. ՍՍԱԼԻՆ Ի. Վ.
29. ՍՑԱՐԵ Կ. ՑԱ.
30. ՏԻՄՈՇԵՆԿՈ Ս. Կ.
31. ՖՈՆԻՆ Մ. Մ.
32. ԽՐՈՒՇՉԵՎ Ն. Ս.
33. ՁԱՐԿՎԻԱՆԻ Կ. Ն.
34. ՇՎԵՐՆԻԿ Ն. Մ.
35. ՇԿԻՐՑԱՏՈՎ Մ. Ֆ.
36. ՇՉԵՐԲԱԿՈՎ Ա. Ս.
37. ՑՈՒՍՈՒՊՈՎ ՈՒ.
38. ՑԱՐՈՍԼԱՎՍԿԻ ԵՄ.

ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՊՈՍԿՐԵԲԻՇԵՎ Ա. Ն.
ՄԵԽԼԻՍ Լ. Զ.
ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎ Գ. Ֆ.
ԴՎԻՆՍԿԻ Բ. Ա.
ՊՈՍՊԵԼՈՎ Պ. Ն.

ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՄԱՆԴԱՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

ԱՆԴՐԻԱՆՈՎ Վ. Մ.
ԲՈՐԿՈՎ Կ. Ա.
ՁԱԴԻՈՆՁԵՆԿՈ Ս. Վ.
ՆԻԿԻՏԻՆ Վ. Դ.
ՊԱՑԵՎ Գ. Ն.
ՊԱՏՈԼԻՉԵՎ Ն. Ս.
ՊՈՊՈՎ Գ. Մ.
ՌՈԴԻՈՆՈՎ Մ. Ի.
ՍԱՎՉԵՆԿՈ Ա. Ա.
ՍՈՒՍԼՈՎ Մ. Ա.
ՁՈՒԵԱՆՈՎ Ա. Ս.
ՇԱՄԲԵՐԳ Մ. Ա.
ՇԱՏԱԼԻՆ Ն. Ն.

ՆԵՐՔԳՈՐԾՈՂԿՈՄՍԻՄԻ ՍՈՒՄԱՆԸՊԵՏ ՁՈՐՔԵՐԻ ՊԵՏՄԱՍԻՆ ՈՒ ԿԵՐՄԻՐԲԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՐԳԵՎ ԱՏՐՈՒՄԸ ՍՍՌՄ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՈՒ ՄԵԴԱԼՆԵՐՈՎ

Ի նշանավորումն ՍՍՌՄ Ներքգործժողկոմատի սահմանապահ զորքերի 20-րդ տարեդարձի, նշելով սոցիալիստական հայրենիքի սահմանների պահպանության ասպարիզում ցուցաբերած անձնվիրությունը և արիությունը, ինչպես նաև զորքերի մարտական ու քաղաքական պատրաստության գործում ձեռք բերված նվաճումները, ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահությունը ՍՍՌՄ շքանշաններով ու մեդալներով պարգևատրեց Ներքգործժողկոմատի սահմանապահ զորքերի պետակազմի ու կարմիրբանակայինների մի մեծ խումբ: Ընդամենը պարգևատրվել է 384 մարդ:

Լենինի շքանշանով պարգևատրվել են՝ կարմիրբանակային Վ. Պ. Իվանովը, գնդապետ Վ. Ս. Պոլենովը, ավագ լեյտենանտ Վ. Ի. Պիլևը և գեներալ-մայոր Տ. Ֆ. Ֆիլիպպովը:

Կարմիր Դրոշի շքանշանով պարգևատրվել են՝ փոխ-ծովակալ Ս. Մ. Վորոբյովը, լեյտենանտ Ի. Պ. Դանիլան, ավագ լեյտենանտ Մ. Մ. Ժուկովսկին, կրտսեր լեյտենանտ Ֆ. Ի. Կոնիշևը, քաղղեկ Յա. Ս. Կրավչենկոն, կարմիրբանակային Ի. Ա. Մալիշևը, ավագ լեյտենանտ Պ. Ի. Մասլյուկը, գեներալ-մայոր Գ. Ա. Պետրովը, մայոր Պ. Վ. Պիսկունովը, ավագ լեյտենանտ Ի. Դ. Ռաբկինը, կրտսեր հրամանատար Ս. Ս. Սակալը և կարմիրբանակային Վ. Ֆ. Ֆիլիպենկոն:

Կարմիր Աստղի շքանշանով պարգևատրվել է 104 մարդ. Նրանց մեջ են՝ կապիտան Վ. Ֆ. Ագարկովը, մայոր Վ. Ա. Ագեևը, եֆրեյտոր Ա. Ի. Այկաշևը, գեներալ-լեյտենանտ Պ. Ա. Արտեմևը, գնդապետ Յա. Դ. Աստաֆևը, կրտսեր լեյտենանտ Ս. Գ. Բոյկոն, բրիգադային կոմիսար, Ե. Ի. Բորիսոգլեբսկին, ենթագնդապետ Լ. Ա. Գոլովկինը, կոմբրիգ Դ. Պ. Ժերբովսկին, կապիտան-լեյտենանտ Ս. Պ. Ժելդակովը, ավագ լեյտենանտ Ա. Ա. Ժիդկոն, գեներալ-մայոր Դ. Վ. Կրամարովը, երկրորդ կարգի զինվորական բժիշկ Տ. Պ. Միշինը, կարմիրբանակային Ա. Մ. Մուկանովը, կարմիրբանակային Վ. Ֆ. Պոցելենկոն, գեներալ-մայոր Կ. Ի. Ռակուտինը, գեներալ-լեյտենանտ Գ. Գ. Սոկոլովը, ավագ սերժանտ Պ. Ի. Նիկոլաևը և ուրիշները:

«Պատվո նշան» շքանշանով պարգևատրվել է 53 մարդ. Նրանց մեջ են՝ բրիգադային կոմիսար Ն. Գ. Անդրիանովը, գնդապետ Ի. Բ. Անիկեևը, կարմիրբանակային Մ. Ախունովը, գնդային կոմիսար Պ. Պ. Բալդինը, ենթագնդապետ Ն. Վ. Բելյաևը, Ուկր. ՍՍՌ Չերնովիցիի մարզի Խլիբոչասկովի շրջանի Չերեպկոուցի գյուղի բնակիչ Ի. Գ. Բուգայան, Տաջիկստանի Կ(բ)Պ Դաշտիջումսկի շրջկոմի քարտուղար Ն. Ի. Բուշևը, առաջին կարգի զինվորական բժիշկ Ն. Գ. Գուսևը, Ուկր. ՍՍՌ Ստանիսլավի մարզի Նադվորնյանսկի շրջանի Զելյոնոյե գյուղի բանվոր Դ. Կ. Դզեպշուկը, գումարտակային կոմիսար Յա. Ի. Զեմլյակովը, մայոր Ա. Պ. Իզուգենևը, դիվիզիոնային անասնաբույժ Վ. Ֆ. Կապուստինը, Թուրքմենական ՍՍՌ Աշխարադի մարզի Բախարդենսկի շրջանի Խան-Քարիզ առուի կոլխոզնիկ Ռեջեբ օղլի Կուրբանը, գումարտակային կոմիսար Գ. Ի. Նանեյշվիլին, առաջին կարգի ինտենդանտ Ֆ. Ի. Նիկոլաևսկին, Տաջիկական ՍՍՌ Դաշտիջումսկի շրջանի Ֆինբաճի գործակալ Մուլյակ Օդինևը, գեներալ-մայոր Ի. Ա. Պետրովը, Աշգաբատի ԱՍՍՌ Բաթումիի շրջանի Աշգարիս-Ծղալի գյուղի կոլխոզնիկ Հասան Խոշևիշ Սավրաիձեն, գնդային կոմիսար Ն. Պ. Շպակովը, Ուկր. ՍՍՌ Լվովի մարզի Օլեշիցի ավանի ծառայող Լ. Ս. Շպինդելը, Բելոռուսական ՍՍՌ Բրեստի մարզի ու շրջանի Կլեչնիկի գյուղի բնակիչ Գ. Վ. Ցակուբչիկը և ուրիշները:

«Խիզախության համար» մեդալով պարգևատրվել է 71 մարդ:

«Մարտական ծառայությունների համար» մեդալով պարգևատրվել է 140 մարդ:

(ՏԱՍՍ)

„ՊՈԼԻՄ ՍՏԱԼԻՆԻ ՄԱՍԻՆ" ՌԱԴԻՈՅՈՎ

ՄՈՍԿՎԱ, 15 (Հայհեռագրի սեփական թղթակցից): Փետրվարի 14-ին, ժամի 19-ից 30 րոպե անց, Կոմինտերնի անվան ռադիոկայանը և Մոսկվայի այլ ռադիոկայաններ հաղորդեցին կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի «Պոլիմ Ստալինի մասին» երկը, որը կատարում էր ՍՍՌ Միության պետական սիմֆոնիկ նվագախումբը և պետական երգեցիկ խումբը, Ուկրաինայի արվեստի վաստակավոր գործիչ դիրիժորների համամիութենական կոնկուրսի լաուրեատ Նատան Ռաբինովիչի ղեկավարությամբ:

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԴԵԼԵԳԱՑԻԱՅԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ

Մ. Թ. փետրվարի 15-ին Մոսկվա ժամանեց Իդրիկա գետից մինչև Բալթիկ ծովը սովետական-գերմանական սահմանը դեմարկացիայի ու ռեդեմարկացիայի ենթարկող ՍՍՌ Միության և Գերմանիայի կենտրոնական խառն հանձնաժողովի գերմանական կառավարական դելեգացիան:

Դելեգացիայի կազմումն են գերմանական դելեգացիայի նախագահ, լիազոր մինիստր պ. Ֆոն Զաուկենը, դելեգացիայի անդամներ՝ արտաքին գործերի մինիստրության խորհրդական պ. Կոնրադը, գնդապետ պ. Ֆոն Հայդենդորֆը, գյուղատնտեսության մինիստրության խորհրդական պ. Տենեմանը, կառավարական խորհրդական պ. Էլլերհորսը և կառավարական խորհրդականի էքսպերտ պ. Ցանենը:

Բելոռուսական կայարանում դելեգացիային դիմավորեցին ՍՍՌ Միության և Գերմանիայի կենտրոնական խառն սահմանային հանձնաժողովի սովետական դելեգացիայի նախագահ ընկ. Լ. Մ. Կուբեցկուվը, սովետական դելեգացիայի գլխավոր քարտուղար ընկ. Ի. Ա. Ռյաբովը, ինչպես նաև Մոսկվայի գերմանական դեսպանության խորհրդական լիազոր մինիստր պ. Ֆոն Տիպելսկիրխի ղեկավարությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԽԱՏԱՎՈՐՆԵՐԸ ՄԵԾ ԽԱՆԴԱՎԱՌՈՒԹՅԱՄԲ ՈՒ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԲՈՒՌՆ ՎԵՐԵԼՔՈՎ ԵՆ ԴԻՄԱՎՈՐՈՒՄ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ ՊԱՐՏԻԱՅԻ 18-ՐԴ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԲԱՑՈՒՄԸ

ՄԵՔՐԵՆԱՇԻՆԵՐԸՆԵՐԻ ՄՈՏ

Գործարանային չչակի մեղմ ուլոցը հաղորդեց աշխատանքի ավարտը։ Զերժինսկու անվան մեքենաշինական գործարանի բանվորները խմբերով, ուրախ խոսակցելով մթնում են վերանորոգման ցեխ և ալտեղից բարձրանում երկրորդ հարկը՝ դեպի մեծ դահլիճը, միասին մասնակցելու համար։ Ցեխի մթնվելիս նրանցից ամեն մեկը միանգամ ևս տեսնում է առաստաղից կախված խոշոր պլակատը, որի վրա գրված է։

«Ի պատիվ 18-րդ պարտկոնֆերանսի, հունվար և փետրվար ամիսների պլանը կատարենք փետրվարի 15-ին։»

Ահա անցնում են մի քանի երիտասարդ բանվորներ։ Նրանցից մեկը ուրախ, բարձրաձայն ասում է։

— Մեր բրիգադն այսօր պլանը կատարեց 1000 տոկոսով...

— Մեծ դահլիճում արտակարգ խանդավառություն է տիրում։ Այստեղ հավաքված բանվորները շարունակում են աշխույժ զրույցը։

Միտինգն սկսվում է։ ՀԿ(բ)Պ Երքաղկոմի քարտուղար ընկ. Ս. Ղևոնդյանը հաղորդում է բոլշևիկների մեծ պարտիայի 18-րդ կոնֆերանսի բացման մասին։ Հավաքվածները փոքրիկ ծափահարում են։ Նրանք բացականչում են.

— Կեցցե մեր հարազատ հայր, բարեկամ և ընկեր՝ Ստալինը։

— Կեցցե մեր մեծ պարտիայի 18-րդ կոնֆերանսը։

Խոսում է գործարանի դիրեկտորի տեղակալ ընկ. Դիմիտրովը։

— Մենք պարտավորվել էինք արտադրական նվերներով դիմավորել մեր պանծալի պարտիայի 18-րդ կոնֆերանսը, գործարանի հունվար և փետրվար ամիսների պլանը կատարելով մինչև փետրվարի 15-ը։ Կոլեկտիվը այդ պարտավորությունը կատարեց բոլշևիկորեն։ Զանազան, ուսկորդային ցուցանիշներ ավելի առանձնապես այսօր, պարտիայի կոնֆերանսի բացման օրը՝ մեր շարքերում եղած 96 ստախանովականները։ Հարությունյան Հայրապետյանը այսօր իր նորման կատարեց 1336 տոկոսով, Ս. Շալկովը՝ 1850 տոկոսով, Ն. Գրիգորյանը՝ 1125, Ա. Ֆեոֆանը՝ 1140, Մ. Հախվերդյանը՝ 1060 տոկոսով։

Միտինգում ելույթներ ունեցան ընկ. ընկ. Ցա. Նովիկովը, Ն. Գրիգորյանը, Ցա. Լովկինը, Կ. Ադամյանը և ուրիշները։

ՄԵԼԿՈՄԲԻՆԱՏՈՒՄ

Երեկոյան ժամը 5-ն է։ Մելկոմբինատի բանվոր-ծառայողները աշխատանքը վերջացրած շտապում են ակումբ, իրենց խոսքն ասելու բոլշևիկների պարտիայի 18-րդ կոնֆերանսի բացման առթիվ հրավիրված միտինգում։

Բացման խոսք է ասում ընկեր Զարյոշկյանը։ Նա համառոտակի նշում է այն նվաճումները, որ ձեռք են բերվել ՍՍՌՄ-ում ՀամԿ(բ)Պ 18-րդ համագումարից հետո։

Միտինգում հանդես եկան մի շարք ստախանովական բանվոր-ծառայողներ, որոնք նոր պարտավորություններ ստանձնեցին։

Մելկոմբինատի կոլեկտիվը պատվով կատարեց բոլշևիկների պարտիայի 18-րդ կոնֆերանսի առթիվ վերցրած իր պարտավորությունը։ Հունվար ամսվա պլանը գերակատարված է 960 տոկոսով։

Ելույթ ունեցողներից ստախանովական բրիգադիր ընկ. Ի. Հակոբյանը ասաց,— իմ բրիգադան, որը նվաճել է փոխանցիկ դրոշը, կրկնապատկել է իր ուժերը հետագա ամիսների պլանների կատարման և գերակատարման համար։

Իրենց ելույթներում նոր պարտավորություններ վերցրին ստախանովական բանվոր Գ. Էմիլյանը, շին. մասի պետ Ե. Ադիբեկյանը և ուրիշները։

ՂՐՖԻՆՈՒՄ

Աշխատանքից հետո քաղաքի Հիմնարկ-ձեռնարկություններում, պղնձի կոմբինատի՝ Շահումյանի, Կոմսոմոլի, Բերիայի անվան, առաջին և երկրորդ հանքերի, Կիրովի անվան ֆլոտացիոն գործարանի, Զարխորդեսի և Լենինյան հանքերի բոլոր հերթափոխություններում բազմամարդ միտինգներ տեղի ունեցան ՀամԿ(բ)Պ 18-րդ կոնֆերանսի բացման առթիվ։ Շահումյանի անվան հանքի վարիչ Գրիգոր Սարգսյանն իր ելույթում ասաց, որ հանքը հունվար, փետրվար ամիսների պլանները կատարեց փետրվարի 8-ին և պարտավորվեց տարեկան պլանը կատարել ութ ամսում, իսկ փետրվարի վերջին 15-օրյակում՝ պլանից դուրս տալ 800 տոննա պղինձ։

Անվանի հանքափորներ՝ Հմայակ Սարգսյանը, Հակոբ Զախարյանը, Ադամ Մարտիրոսյանը, Լևոն Ստեփանյանը, Հմայակ Ներսիսյանը, որոնք փետրվարի 10-ին կատարեցին առաջին եռամսյակի իրենց պլանները, պարտավորվեցին օրական կատարել 8—4 նորմա, իսկ տարեկան պլանը՝ 8—9 ամսում։

ԲԱԶՍԱՄԱՐԴ ՄԻՏԻՆԳ Ս. Մ. ԿԻՐՈՎԻ ԱՆՎԱՆ ԿՈՄԲԻՆԱՏՈՒՄ

Շչակը ազդարարում է օրվա աշխատանքի վերջը։ Կիրովի անվան կոմբինատի հազարավոր բանվորներ, ստախանովականներ, ինժեներա-տեխնիկական աշխատողներ շտապում են դեպի կոմբինատի բնակարանային դահլիճը։ Այստեղ են ՀԿ(բ)Պ կենտկոմի քարտուղարներ՝ ընկ. ընկ. Ս. Միքայելյանն ու Ս. Կարապետյանը։ Ժամը 5-ն անց է 30 րոպե։ Կոմբինատի պարարյուրյի քարտուղար ընկ. Թ. Դեվոսյանը 18-րդ պարտկոնֆերանսի բացմանը նվիրված միտինգը հայտարարում է բացված։

Միտինգում հակիրճ ճառով հանդես է գալիս ՀԿ(բ)Պ կենտկոմի քարտուղար ընկ. Սահակ Կարապետյանը։

— Նա, համառոտակի կանգ առնելով միջազգային արդի դրության և սովետական հզոր պետության արտաքին քաղաքականության վրա՝ կոնկրետ կերպով ցույց է տալիս, թե ինչպես կապիտալիզմն սկսված 2-րդ իմպերիալիստական պատերազմում անխնա կերպով ոչնչացնում է մարդկության զարգացման կուլտուրայի արժեքավոր հուշարձանները, ավերում է քաղաքները, ոչնչացնում է ժողովուրդներ ու պետություններ, իսկ այդ նույն ժամանակում անհասկանալի կերպով աճում ու բարձրանում է սովետական պետության հզորությունը։ Էլ ավելի է աճում մեր ստեղծագործ ժողովրդի բարոյական քաղաքական միասնությունը, նրա սերն ու անհուն նվիրվածությունը դեպի մեր մեծ պարտիան, նրա ստեղծող մեծ Ստալինը։ Դահլիճի բոլոր ծայրերից պոռթկում են ծափահարությունները, թնդում է հուժկու ուռան, որը վեր է ածվում երկար ժամանակ չդադարող օվացիայի ի պատիվ ժողովուրդների մեծ առաջնորդ, մեր հայր ու բարեկամ ընկեր Ստալինի։

— Այսօր,— ասում է ընկ. Կարապետյանը, նշանավոր օր է մեր երկրում, Այսօր բացվում է մեր պարտիայի 18-րդ կոնֆերանսը։ Մեր մեծ պարտիան ու սովետական ժողովուրդը խոշորագույն հաղթանակներով են եկել կոնֆերանս։

Ինչպես մեր Միության, այնպես էլ մեր ռեսպուբլիկայի համարյա բոլոր արդյունաբերական ճեռնարկությունները նշանակալի արտադրական նվաճումներով են նշում կոնֆերանսի բացումը։

Ղափանի և Ալավերդու բանվորները խոշոր նվաճումներ ձեռք բերին նախակոնֆերանսյան մրցության մեջ։ Ղափանի հանքափոր ընկ. Մինաս Հակոբյանը, ի պատիվ կոնֆերանսի, փետրվարի 13-ին նորման կատարելով 7128 տոկոսով, ապահովեց համամիութենական ռեկորդ։

Կոլխոզները, ՄՏ կայանները կոլտ ու պետական են դիմավորում այս տարվա գարնանացանը։ Համարյա ամբողջությամբ ավարտված է տրակտորների և գյուղագործիքների նորոգումը։

Զեռք բերված ամեն մի նվաճումն ու հաղթանակն անխզելիորեն կապված է մեր պարտիայի հանճարեղ առաջնորդ ընկեր Ստալինի անվան հետ,— ասում է ընկ. Կարապետյանը,— Թող կեցցե, երկար ու երկար տարիներ ապրի մեր հաղթանակների կազմակերպիչ ու ոգեշնչող մեծ Ստալինը։ Ընկ. Կարապետյանի վերջին խոսքերը ծածկվում են բուռն ծափահարություններով և երկար ժամանակ չդադարող օվացիայով։

Այնուհետև ելույթներ են ունենում կոմբինատի առաջավոր մարդիկ։ Առաջինը հանդես է գալիս ընկ. Սահակ Սահակյանը։ Մենք,— ասում է նա,— պատվով կատարեցինք նախակոնֆերանսյան մրցության մեջ վերցրած մեր պարտավորությունները։ Ստախանովական բրիգադիրներ՝ Ա. Խաչատրյանի, Վ. Կիրակոսյանի, Վ. Օգանովի բրիգադաները իրենց պլանները կատարեցին 106—111 տոկոսով։ Այսօր մեր հերթափոխը ի պատիվ կոնֆերանսի,— ասում է նա,— իր պլանից դուրս 6 տոննա ավելի արտադրանք տվեց։ Ընկ. Մակար Զաքարյանը (2-րդ դրուպայից) իր ելույթում նշում է, թե ինչպես իրենց ցեխի բոլոր հերթափոխները կատարեցին և գերակատարեցին նախակոնֆերանսյան մրցության մեջ վերցրած պարտավորությունները։ Զգալի չափով կբնութագրվեցին պարապուրդները։ Ամսի 14-ին № 6 և № 10 հերթափոխներն իրենց պլանները կատարեցին 140—190 տոկոսով։

Բոլոր ելույթ ունեցողները, նշելով կոնֆերանսի պատվին ծավալվող մրցության ընթացքում ձեռք բերված հաջողությունները, միահամուռ կերպով պարտավորվում են մրցությունը շարունակել նաև կոնֆերանսից հետո ընթացիկ տնտեսական տարվա արտադրական ծրագրերը կատարել ժամանակից շուտ։

«ԱՐԱՐԱՏ» ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ

Ի պատիվ 18-րդ պարտկոնֆերանսի բացմանը, «Արարատ» գործարանի բանվոր-ծառայողների միտինգն անցավ բուռն և փոթորկալից ծափերի տակ։

— Մենք, արարատցիներս,— ասաց գործարկոմի նախագահ ընկ. Կ. Թովմասյանը,— բոլշևիկների պարտիայի 18-րդ կոնֆերանսի բացումը դիմավորում ենք վերցրած պարտավորությունների գերակատարումով։ Հունվար և փետրվար ամիսների արտադրական պլանները կատարված են մեկ ամիս 12 օրում՝ 101,1 տոկոսով, իսկ արտադրողականությունը 13 տոկոսի փոխարեն բարձրացված է 30,8 տոկոսով։

Միտինգում ջերմ ելույթներ ունեցան գործարանի բանվոր-ծառայողները, առաջավոր ստախանովականները և ինտելիգենցիայի լավագույն ներկայացուցիչները։

— Մենք,— ասաց տակառի ցեխի անվանի ստախանովական վարպետ, «Աշխատանքի գերազանցության համար» մեդալով պարգևատրված ընկեր Վ. Թովմասյանը,— 2 ամսվա պլանը կատարեցինք մեկ ամիս 10 օրում՝ 103 տոկոսով։ Ես պարտավորվում եմ— ասում է նա,— այս տարվա իմ արտադրական պլանները կատարել 6 ամսում։

Գործարանի փոխանցիկ դրոշը նվաճած գինու ցեխի գլխավոր գինեգործ, «Աշխատանքի գերազանցության համար» մեդալով պարգևատրված ընկ. Կիրիլլ Սիլլենկոն իր ելույթում ասաց,— մեր երկու ամսվա պլանը մենք կատարեցինք 128 տոկոսով։ Մեր ցեխը պարտավորվում է նոր թափով շարունակել աշխատանքը և մինչև վերջը իր ձեռքից բաց չթողնել փոխանցիկ դրոշը։

Գործարանի բանվորներն ու ծառայողները, ի պատիվ ՀամԿ(բ)Պ 18-րդ կոնֆերանսի, ստանձնեցին նորանոր պարտավորություններ՝ էլ ավելի բարձրացնել աշխատանքային կարգապահությունը, աշխատանքի արտադրողականությունը և ժամկետից շուտ կատարել ու գերակատարել տարեկան արտադրական պլանները։

ԼԵՆԻՆԱԿԱՆՈՒՄ

Փետրվարի 15-ին, ՀամԿ(բ)Պ 18-րդ կոնֆերանսի բացման առթիվ, բազմամարդ խանդավառ միտինգներ գումարվեցին Լենինականի հիմնարկ-ձեռնարկություններում։ Աշխատավորներն ամենուրեք իրենց ջերմ ու նվիրական խոսքն էին ուղղում սիրելի առաջնորդ, կոմունիզմի հաղթանակների կազմակերպիչ մեծ Ստալինին։

Շադեքարշային դեպոյի բանվոր-ծառայողների միտինգում, դեպոյի պետ ընկ. Զախարյուկը ասաց. «Մեր կոլեկտիվը պատվով դուրս եկավ նախակոնֆերանսյան մրցությունից. լիովին կատարված են մեր ստանձնած պարտավորությունները՝ վառելանյութի խնայման, նորոգումների կատարման և գնացքների տեխնիկական արագության բարձրացման բնագավառում։— Նպատակն այն է,— ասում է ընկ. Զախարյուկը,— որ մեր վերցրած տեմպերը պահպանվեն ամբողջ տարվա ընթացքում։

Նույն միտինգում հանդես գալով, անվանի կրիվոնոսական մեքենավար Գարեգին Աբաջյանը ասաց,— մենք ջերմորեն ողջունում ենք բոլշևիկների պարտիայի 18-րդ կոնֆերանսը և պատրաստ ենք անշեղորեն կատարել Ձրա բոլոր որոշումները։

Մոլոտովի անվան մանվածքային գործարանի կոլեկտիվի միտինգի բանաձևում ասված է— 18-րդ պարտկոնֆերանսը մեզ նոր լիցք կտա կոմունիզմի հաղթանակի համար մղվող պայքարում։ Մենք պատրաստ ենք անշեղորեն կատարելու պարտիայի ու մեր իմաստուն առաջնորդ մեծ Ստալինի բոլոր ցուցումները, հանուն մեր երկրի տնտեսական ու քաղաքական հզորության ամրապնդման։ Մենք պարտավորվում ենք 1941 թվի պլանը կատարել դեկտեմբերի 25-ին և 1940 թվի համեմատությամբ աշխատանքի արտադրողականությունը բարձրացնել 2—3 տոկոսով։

ԵՌԱՄՅԱԿԻ ՊԼԱՆԸ ԿԱՏԱՐՎԱԾ Է

Անի-պեմզայի կոլեկտիվը մտնելով 18-րդ պարտկոնֆերանսի անվան սոցիալիստական մրցությանմեջ, կոնֆերանսի բացման օրը եռամյակի պլանը կատարեց 101,6 տոկոսով։ Ստախանովյան աշխատանքի գերազանց ցուցանիշներ տվին հանքերի անվանի ստախանովականներ՝ Չիլինգարյանը, Խաչատրյանը, Ներսիսյանը, Բաղդասարյանը, Հովհաննիսյանը, Զատիկյանը և ուրիշները։

Անի-պեմզայի հանքերի դիրեկտոր՝ ՍԱՐԳՍՅԱՆ

ՎԵՂԱՐՀԱՊԱՏՈՒՄ

Փետրվարի 14-ին և 15-ին չրջանի կոլխոզներում, սովխոզներում ու հիմնարկ-ձեռնարկություններում տեղի ունեցան խանդավառ միտինգներ— նվիրված պարտիայի 18-րդ կոնֆերանսի բացմանը։

Ամփոփելով նախակոնֆերանսյան մրցության փայլուն արդյունքները, չրջանը վերցրեց նորանոր պարտավորություններ։ Լենինի չքնաղանակիր «Աստղաձագ» կոլխոզը պարտավորվել է 300 հեկտար բամբակի ցանքը ավարտել ապրիլի 25-ին, իսկ այգեփորը՝ մայիսի 1-ին։ Կոլխոզները որոշել են՝ ստորին Զանգուի Ջրանցքի կառուցման 305 հազար խորանարդ մետր հողային աշխատանքները (13 կիլոմետրի վրա) ավարտել մարտի 10-ին, ամբողջ չրջանում դարնանացանը ավարտել 7—8 աշխատանքային օրում։ Այդեշատի ենթաչրջանի կոլխոզները փետրվարի 17-ից սկսում են դարու և ցորենի ցանքը։ Նրանք, ի պատիվ կոնֆերանսի բացման, պարտավորվել են՝ ցանքն ավարտել ժամկետից շուտ ու բարձր որակով։

Կոնկրետ պարտավորություններ են վերցրել Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի գլխավոր կոմիտեի 1-ին կարգի դիպլոմով պարգևատրված ՄՏ կայանի տրակտորիստները։

ԿՈՏԵՑՔՈՒՄ

Սիրո ու նվիրվածության խանդավառ ցույցերի վերածվեցին 18-րդ պարտկոնֆերանսի բացման առթիվ գումարված միտինգները։ Միտինգին մասնակցող կոլխոզնիկները, բանվորներն ու ծառայողները երախտագիտությամբ շնորհակալության ջերմ խոսքեր են ուղղում կոլխոզային կարգերի կազմակերպիչ մեծ Ստալինին։

Երջանում ավարտված է գարնանացանի 12·680 ցենտներ սերմացուի զտումը։ Նորոգվել է գյուղատնտեսական ամբողջ ինվենտարը։ Մինչև փետրվարի 15-ն արդեն դաշտերն է փոխադրվել 12 հազար սայլ տեղական պարարտանյութ։ Հիմնովին ավարտվել է տրակտորների նորոգումը։

Զրավականանալով ձեռք բերված հաջողություններով, չրջանի կոլխոզնիկները միտինգներում պարտավորություն են վերցրել 1941 թվին բոլոր կուլտուրաներից բարձր բերք ստանալ և հացահատիկային կուլտուրաների ցանքը չրջանում ավարտել մայիսի 10-ին։

ԱԼԱՎԵՐԴՈՒՄ

Շամլուղի և Լենինյան հանքերում, պղնձաձուլարանում, պղնձարջասպի գործարանում, կոլխոզներում ու արտադրական ձեռնարկություններում՝ ի պատիվ 18-րդ կոնֆերանսի բացման, տեղի ունեցան միտինգներ։

Շամլուղի հանքերում գումարված միտինգը անցավ բուռն խանդավառությամբ։ Իր ելույթում անվանի հանքափոր, Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի դեպուտատ Յակով Յանկարուզովը պարտավորություն վերցրեց մինչև տարվա վերջը ամսվա իր պլանը կատարել 150 տոկոսով։ Հորատող Աբաս Աբուլֆատը, հանքամասերի վարիչներ Ասլանովը և Տարասկինը պարտավորություն են ստանձնել ի պատիվ կոնֆերանսի բացման, տարեկան պլանը կատարել ժամկետից մեկ ամիս շուտ։

Զուլբարանի կոլեկտիվի միտինգում որոշում է ընդունվել— ժամկետից 15 օր առաջ կատարել 1-ին եռամսյակի պլանը և խնայել 5 տոկոս վառելանյութ։

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Երեկ, ցերեկվա ժամը 2 և կեսին, Մոլոտովի անվան Պետական համալսարանի մեծ դահլիճում տեղի ունեցավ պրոֆեսոր-դասախոսական կազմի և ուսանողության միտինգը՝ նվիրված պարտիայի 18-րդ կոնֆերանսի բացմանը։

Կոնֆերանսի օրակարգի հարցերի մասին հաղորդում է անում Հայկական ՍՍՌ Լուսավորության Ժողովրդական կոմիսար ընկ. Բ. Մարտիրոսյանը։

Համալսարանի պրոֆեսոր-դասախոսների կողմից պարտկոնֆերանսին ողջույնի խոսք է ասում ընկ. Սիրակ Բերբերյանը։

— Պարտիայի 18-րդ կոնֆերանսը,— ասում է նա,— խոշոր իրադարձություն է հանդիսանում մեր ժողովուրդների կյանքում։ Մեր պրոֆեսոր-դասախոսները խոսք են տալիս ազնվորեն աշխատել և երկրի համար պատրաստել որակյալ կադրեր։

Համալսարանի կոմերիտական կազմակերպության և ուսանողության կողմից ողջույնի խոսք է ասում գերազանցիկ ուսանող, ստալինյան թոշակառու ընկ. Գ. Ղարիբջանյանը։

Այնուհետև ելույթ է ունենում համալսարանի պարտկազմակերպության բյուրոյի քարտուղար ընկ. Գ. Ներսիսյանը, որը կոչ է անում պրոֆեսոր-դասախոսական կազմին և ուսանողությանը՝ մանրամասնորեն ուսումնասիրել պարտիայի 18-րդ կոնֆերանսի որոշումները և պայքարել այդ որոշումների կենսագործման համար։

Միտինգ Ս. Մ. Կիրովի անվան կոմբինատում՝ ի պատիվ ՀամԿ(բ)Պ 18-րդ կոնֆերանսի բացման։ (Ձախ կողմում) ՀԿ(բ)Պ կենտկոմի քարտուղար ընկ. Ս. Կարապետյանը։

ՍՆՆԴԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՍՏԱԽԱՆՈՎԱԿԱՆՆԵՐԸ ԿԱՏԱՐԵՑԻՆ ԻՐԵՆՑ ԽՈՍՏՈՒՄԸ

Սովետական Միության բազմամիլիոն աշխատավորությունն արտադրական փայլուն նվաճումներով դիմավորեց բոլշևիկների փառապանծ պարտիայի 18-րդ կոնֆերանսը։

Հայաստանի սննդի արդյունաբերության աշխատողները խոստացել էին հետ չմնալ քաղաքական և արտադրական ակտիվության ու խանդավառության այն ընդհանուր վերելքից, որ ամենուրեք սկսվել էր մեր երկրում ՀամԿ(բ) պարտիայի 18-րդ կոնֆերանսի գումարման կապակցությամբ։

Ակտիվորեն մասնակցելով նախակոնֆերանսյան սոցիալիստական մրցությանը, Հայկական ՍՍՌ Սննդի արդյունաբերության ձեռնարկությունների կոլեկտիվները ձեռք բերին զգալի նվաճումներ, կատարելով և գերակատարելով արտադրական պլանները։

Սննդի արդյունաբերությունը հունվար ամսվա արտադրական ծրագիրը կատարեց 107,2 տոկոսով, իսկ փետրվար ամսվա առաջին տասնօրյակի պլանը՝ 119 տոկոսով։ Պլանից դուրս արտադրված է մեկ միլիոն 82 հազար ռուբլու ապրանք։

Զգալի չափով գերակատարել են իրենց պլանները «Արարատ» տրեստը, Հացի տրեստը, Մխախոտի և Մակարոնի գործարանները։

«Արարատ» տրեստի գործարանը (դիրեկտոր՝ Ա. Դուրյան) հունվար և փետրվար ամիսների արտադրական պլանը կատարեց փետրվարի 12-ին, տալով աշխատանքի արտադրողականության բարձր ցուցանիշներ, Ձեռնարկության բոլոր 11 ցեխերն արդեն էլ մրցում են միմյանց հետ, ձգտելով ավելի բարձր չափով գերակատարել իրենց պլանները։

Գործարանի գինու ցեխը, գերակատարելով երկու ամսվա պլանը, նվաճեց միջգործարանային փոխանցիկ դրոշը։ Այդ առաջավոր ցեխը գլխավորում է լավագույն գինեգործ, չքնաղանակիր Կիրիլլ Գրիգորևիչ Սիլլենկոն, որն արդեն 43 տարի է ինչ աշխատում է նույն գործարանում։ Հատկապես արժանի է գովասանքի գինու մշակման բրիգադան, որը փետրվարի 11-ի առաջադրանքը կատարեց համարյա եռապատիկ չափով։ Բրիգադան ղեկավարում է սննդի արդյունաբերության գերազանցիկի կոչում ստացած Աբամալիք Հովհաննիսյանը։

Մրցության ընթացքում խոշոր նվաճումներ ձեռք բերեց նաև տակառի ցեխը՝ Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի դեպուտատ ընկ. Գևորգ Գասպարյանի ղեկավարությամբ (պարտությունի քարտուղար, ցեխի վարիչ)։ Տակառագործ-ստախանովական, չքնաղանակիր Վաղարշակ Թովմասյանը հունվար ամսին օրական մի ջիլն հալվով պատրաստել է չորս տակառ, նորմայով նախատեսված 1,7 տակառի փոխարեն։

Հետ չի մնում նաև բրիգադիր Հուսեին Բաբաևը, որն ութ տարի գործարանում աշխատելով՝ կարգապահության և հարմարվողականության լավագույն օրինակներ է ցույց տվել։

Նախակոնֆերանսյան սոցիալիստական մրցությունը նշանակալի արդյունքներ տվեց նաև Երևանի ծխախոտի գործարանում։ Հունվարի և փետրվար ամսվա առաջին տասնօրյակի ընդհանուր արտադրական ծրագիրը 112 տոկոսով կատարելով, գործարանի կոլեկտիվը ազատվեց նաև այն պարտավորությունների կատարումը, որ նա ստանձնել էր աշխատանքի արտադրողականության բարձրացման և արտադրանքի որակի լավացման ուղղությամբ։ 18-րդ պարտկոնֆերանսի անունը կրող երկու բրիգադաներն աշխատանքի փայլուն օրինակներ ցույց տվին։ Դրանցից՝ ծխախոտի տեսակավորման ցեխի առաջին բրիգադան (բրիգադիր՝ Կոփյան) հունվար ամսվա առաջադրանքը կատարեց 144 տոկոսով, իսկ տուփի ցեխի երկրորդ բրիգադան (բրիգադիր՝ Ինարիկ Գրիգորյան) 146,8 տոկոսով։

Սոցմրցության ընթացքում աշխատանքի բարձր ցուցանիշների հասան բանվոր-ստախանովական կարապետ Զարյանը, որը հունվար ամսում տակավորել է 5624 կիլոգրամ ծխախոտ, նորմայով նախատեսված 3453 կիլոգրամի դիմաց, դիզել ցեխի մեքենավար, Երևանի քաղսովետի դեպուտատ Ավուլինա Հովհաննիսյանը, գլանակ դարսող բանվորուհի Արուսյակ Բեգլարյանը, տուփագործ ստախանովական և չքնաղանակիր Համիկ Հովհաննիսյանը և ուրիշները։

Սակայն, Հայկական ՍՍՌ Սննդարդյունաբերության սիստեմում եղան նաև այնպիսի ձեռնարկություններ, որոնք չկարողացան անհրաժեշտ պայմաններ ստեղծել, իրենց ստանձնած պարտավորությունները պատվով իրագործելու համար։ Այդպիսի ձեռնարկությունների թվին են պատկանում Երևանի Ձեթ-օճառ կոմբինատը, Արդու հանքային ջրերի գործարանը և Երևանի գարեջրի գործարանը, որոնք զգալի չափով թերակատարել են իրենց պլանները։ Այդ ձեռնարկությունների ղեկավարները և պարտական կազմակերպությունները պետք է, որ դրանից համապատասխան եզրակացություն անեն և անհապաղ վերակառուցեն իրենց աշխատանքը։ գործարանները ճեղքվածքից դուրս հանելու և հետագայում պլաններն անթերի կատարելու համար։

Հունվար ամսում և փետրվարի առաջին տասնօրյակում ձեռք բերված նվաճումները վկայում են, որ պլանների գերակատարման համար գոյություն ունեն մեծ հնարավորություններ։

Դեռ նոր է սկսվել տարին։ Անհրաժեշտ է ամրացնել ձեռք բերված հաջողությունները և ստեղծել բոլոր պայմանները, որպեսզի սննդի արդյունաբերության յուրաքանչյուր գործարան իր տարեկան պլանը կատարի որակական և քանակական բարձր ցուցանիշներով։

Ս. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

(Հայկական ՍՍՌ Սննդարդյունաբերության արտադրական վարչության պետ)

ԿՈՄՍՈՄՈԼՍԿՈՅԱՆ

Փետրվարի 14-ին և 15-ին չրջանի կոլխոզներում, սովխոզներում ու հիմնարկ-ձեռնարկություններում տեղի ունեցան խանդավառ միտինգներ— նվիրված պարտիայի 18-րդ կոնֆերանսի բացմանը։

Ամփոփելով նախակոնֆերանսյան մրցության փայլուն արդյունքները, չրջանը վերցրեց նորանոր պարտավորություններ։ Լենինի չքնաղանակիր «Աստղաձագ» կոլխոզը պարտավորվել է 300 հեկտար բամբակի ցանքը ավարտել ապրիլի 25-ին, իսկ այգեփորը՝ մայիսի 1-ին։ Կոլխոզները որոշել են՝ ստորին Զանգուի Ջրանցքի կառուցման 305 հազար խորանարդ մետր հողային աշխատանքները (13 կիլոմետրի վրա) ավարտել մարտի 10-ին, ամբողջ չրջանում դարնանացանը ավարտել 7—8 աշխատանքային օրում։ Այդեշատի ենթաչրջանի կոլխոզները փետրվարի 17-ից սկսում են դարու և ցորենի ցանքը։ Նրանք, ի պատիվ կոնֆերանսի բացման, պարտավորվել են՝ ցանքն ավարտել ժամկետից շուտ ու բարձր որակով։

Կոնկրետ պարտավորություններ են վերցրել Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի գլխավոր կոմիտեի 1-ին կարգի դիպլոմով պարգևատրված ՄՏ կայանի տրակտորիստները։

ԿՈՏԵՑՔՈՒՄ

Սիրո ու նվիրվածության խանդավառ ցույցերի վերածվեցին 18-րդ պարտկոնֆերանսի բացման առթիվ գումարված միտինգները։ Միտինգին մասնակցող կոլխոզնիկները, բանվորներն ու ծառայողները երախտագիտությամբ շնորհակալության ջերմ խոսքեր են ուղղում կոլխոզային կարգերի կազմակերպիչ մեծ Ստալինին։

Երջանում ավարտված է գարնանացանի 12·680 ցենտներ սերմացուի զտումը։ Նորոգվել է գյուղատնտեսական ամբողջ ինվենտարը։ Մինչև փետրվարի 15-ն արդեն դաշտերն է փոխադրվել 12 հազար սայլ տեղական պարարտանյութ։ Հիմնովին ավարտվել է տրակտորների նորոգումը։

Զրավականանալով ձեռք բերված հաջողություններով, չրջանի կոլխոզնիկները միտինգներում պարտավորություն են վերցրել 1941 թվին բոլոր կուլտուրաներից բարձր բերք ստանալ և հացահատիկային կուլտուրաների ցանքը չրջանում ավարտել մայիսի 10-ին։

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Երեկ, ցերեկվա ժամը 2 և կեսին, Մոլոտովի անվան Պետական համալսարանի մեծ դահլիճում տեղի ունեցավ պրոֆեսոր-դասախոսական կազմի և ուսանողության միտինգը՝ նվիրված պարտիայի 18-րդ կոնֆերանսի բացմանը։

Կոնֆերանսի օրակարգի հարցերի մասին հաղորդում է անում Հայկական ՍՍՌ Լուսավորության Ժողովրդական կոմիսար ընկ. Բ. Մարտիրոսյանը։

Համալսարանի պրոֆեսոր-դասախոսների կողմից պարտկոնֆերանսին ողջույնի խոսք է ասում ընկ. Սիրակ Բերբերյանը։

— Պարտիայի 18-րդ կոնֆերանսը,— ասում է նա,— խոշոր իրադարձություն է հանդիսանում մեր ժողովուրդների կյանքում։ Մեր պրոֆեսոր-դասախոսները խոսք են տալիս ազնվորեն աշխատել և երկրի համար պատրաստել որակյալ կադրեր։

Համալսարանի կոմերիտական կազմակերպության և ուսանողության կողմից ողջույնի խոսք է ասում գերազանցիկ ուսանող, ստալինյան թոշակառու ընկ. Գ. Ղարիբջանյանը։

Այնուհետև ելույթ է ունենում համալսարանի պարտկազմակերպության բյուրոյի քարտուղար ընկ. Գ. Ներսիսյանը, որը կոչ է անում պրոֆեսոր-դասախոսական կազմին և ուսանողությանը՝ մանրամասնորեն ուսումնասիրել պարտիայի 18-րդ կոնֆերանսի որոշումները և պայքարել այդ որոշումների կենսագործման համար։

ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՊԱՅՔԱՐ ՊԱՂՆՁԻ ՀԱՄԱՐ

Սկսած 1940 թ. հոկտեմբերից, պարտիական կազմակերպությունը բոլշևիկորեն ձեռնամուխ եղավ հանքերում գոյություն ունեցող ճեղվածքի վերացմանը, պարտկազմակերպության բոլոր ուժերը մոբիլիզացիայի ենթարկվեցին արտադրական պլանի կատարման համար։

Մտնելով գունավոր մետալուրգիայի ձեռնարկությունների սոցիալիստական մրցության մեջ, սոցմրցման պայմանագրեր կնքվեցին առանձին տեղամասերի, հերթափոխերի, բրիգադների ու բանվորների միջև, ինչպես նաև Ալավերդու պղնձաձուլական գործարանի ու Զափանի կոմբինատի միջև։ Ներկայումս միմյանց հետ մրցում են բոլոր ցեխերն ու բրիգադները, ըստ որում սոցմրցման մեջ ընդգրկված է բանվորների ընդհանուր թվի 94 տոկոսը։

Ինչպես պարտիական ժողովներում, այնպես էլ տեղամասերի արտադրական խորհրդակցություններում հոկտեմբերից սկսած յուրաքանչյուր ամիս քննության են առնվել նախորդ ամսի պլանի կատարման արդյունքները և հաջորդ ամսի առաջադրանքը, այն հասցնելով յուրաքանչյուր բանվորի։

Առաջին ու հիմնական հարցը, որ ծառացած էր պարտիական կազմակերպության առջև, դա պարտիական ուժերի դասավորումն էր ըստ կարևորագույն տեղամասերի ու բրիգադների և պարտիական աշխատանքի վերակառուցումն արտադրական պլանների կատարումն ապահովելու ոգով։ Եթե մինչև հոկտեմբեր ամիսը հանքերում անմիջականորեն աշխատում էին 104 պարտիականներից մոտավորապես 30-ը, ապա այժմ աշխատում են 51 մարդ։ Դրա հետ միասին զգալիորեն բարելավվեց ագիտացիոն աշխատանքը։

Հաջորդ հարցը, որին պարտիական կազմակերպությունը լուրջ ուշադրություն նվիրեց աշխատանքային կարգապահության բարձրացումն է, միանձնյա ղեկավարության ամրապնդումը և անհրաժեշտ պայմանների ստեղծումը, որպեսզի տնտեսվարները իրոք դառնան արտադրության հրամանատարներ։

Պարտկազմակերպությունը սիստեմատիկաբար հետևել է ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության 1940 թ. հունիսի 26-ի Հրամանագրի կենսագործմանը, որի հետևանքով, եթե սեպտեմբերին եղել է 14 գործազրկում, ապա այժմ գործազրկումները բոլորովին վերացված են։

Մենք լուրջ ուշադրություն դարձրինք առաջին տեղամասը օդով ապահովելու խնդրին։ Հայտնի է, որ 1941 թվի երկրորդ եռամսյակից հանքերում հիմնական հանույթը պետք է տա առաջին տեղամասը, իսկ գոյություն ունեցող օդատար մագիստրալը ոչ միայն չէր ապահովում տեղամասի նախապատրաստումը մեծ ծավալի աշխատանքների համար, այլև սպառնում էր վիժեցնել նշված պլանի կատարումը։

Պարտիայի անդամ, հանքավարչության գլխավոր մեխանիկ ընկ. Ստեփան Սպիրիդոնովի նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ կարճ ժամանակամիջոցում անցկացվեց նոր օդատար մագիստրալ, մոտավորապես երկու կիլոմետր երկարությամբ, առանց տեղամասի նորմալ աշխատանքը խանգարելու։ Եռողմանների միացումը կատարում էր փականագործների բրիգադն (բրիգադիր, պարտիայի անդամ ընկ. Սերոբ Թումասյան)։ Այժմ ոչ միայն տեղամասն ապահովված է օդով, այլև պայմաններ են ստեղծված տեղամասը բազմահանքախորշային հորատման մեթոդին փոխադրելու համար։

Պարտբյուրոյում և պարտժողովներում քննարկվելիք հարցերը նախապատրաստվում են 4—5 օր առաջ, ընդունված որոշումները լինում են կոնկրետ։ Սիստեմատիկաբար, ինչպես բյուրոյի նիստերում, այնպես էլ ժողովներում զեկուցումներ են լսվում այդ որոշումների կատարման ընթացքի մասին։

Հոկտեմբերին վերանայվեց ագիտատորների կազմը և նրանց թիվը 18-ից հասցվեց 23-ի։ 1940 թվի 4-րդ եռամսյակի ընթացքում այդ ագիտատորներն անց են կացրել 156 դրույց, որոնց մասնակցել է 1755 մարդ, իսկ հունվարին՝ 51 դրույց, որոնց մասնակցել է 581 մարդ։ Դրույցների հիմնական թեմաներն են եղել՝ վերջին լուրերը, պարտիայի ու կառավարության որոշումները, Զափանի կոմբինատի ու Ալավերդու պղնձաձուլական գործարանի հետ հանքերի կնքած սոցմրցման հարցերը և 18-րդ պարտկոնֆերանսը արժանավայել կերպով դիմավորելու նախապատրաստությունը։

Զգալի աշխատանք է կատարված պարտիականների բարոյական մակարդակը բարձրացնելու ուղղությամբ։ Պարտիական կազմակերպության մեջ եղած 104 մարդուց ՀԱՄԿ(բ)Պ պատմության համառոտ դասընթացն ուսումնասիրում են 74 ընկերներ։ 30 հոգի հաճախում են գիշերային դպրոցներ։ Պարտիայի շրջկոմի օգնությամբ վերջերս խմբակ կազմակերպվեց պարտիայի պատմությունն ուսումնասիրողների համար, որտեղ ընդգրկված են 28 մարդ։

Այս բոլոր ձեռնարկումների շնորհիվ հանքերի աշխատանքն զգալիորեն բարելավվեց և բարձրացավ հանքաքարի հանույթը։ Եթե անցյալ տարվա սեպտեմբերին հանքաքարի հանույթի պլանը կատարվել էր 57 տոկոսով, ապա հոկտեմբերին կատարվեց 71,1 տոկոսով, նոյեմբերին՝ 100,7 տոկոսով, դեկտեմբերին՝ 108 տոկոսով և հունվարին՝ 105,8 տոկոսով։

Պլանների կատարման մեջ առաջից են ընթանում պարտիականները։ Հանքերի առաջավոր երկրորդ տեղամասում աշխատում են 10 պարտիականներ, որոնք բոլորն էլ կատարում են իրենց պլանները։ Այդ տեղամասի բոլոր երեք տեխնիկներն էլ պարտիականներ են և ամբողջ հերթափոխի պլանները կատարում են 115—137 տոկոսով։

Ահա մի քանի թվեր առանձին պարտիականների կողմից իրենց պլանների կատարման մասին։

Հանքափոր Հովսեփ Մամյանը, Համ. Կ(բ)Պ անդամ, իր պլանը կատարել է հոկտեմբերին— 126, նոյեմբերին— 146, դեկտեմբերին—224 տոկոսով։ Նա բազմահանքախորշային հորատման նախաձեռնողը եղավ Շամլուղի հանքերում։ Առաջին ռեկորդը նա սահմանեց Հայաստանում սոցիալիստական իշխանության հաստատման 20-րդ տարեդարձի օրը, հերթափոխային նորման կատարելով 499 տոկոսով։

Հանքափոր Արիստիդ Բուդաղովը, Համկ(բ)Պ թեկնածու, պլանը կատարել է՝ հոկտեմբերին՝ 126, նոյեմբերին՝ 146 և դեկտեմբերին՝ 224 տոկոսով։ Ընկ. Ա. Բուդաղովը բազմահանքախորշային հորատումը կիրառելու նախաձեռնողներից մեկն է։

18-րդ պարտկոնֆերանսի անվան սոցիալիստական մրցությունը, Հայաստանի Կ(բ)Պ Կենտկոմի բյուրոյի 1941 թ. հունվարի 9-ի որոշումը՝ բազմահանքախորշային հորատման արդյունքներն ամրացնելու մասին ու այդ մեթոդի փոխադրումը մեր հանքերի առաջին տեղամասը, մեծ խանդավառություն առաջացրին մեր բանվորների մեջ։ Օրեց-օր բարձրանում է պլանի կատարման տոկոսը։ Հանքաքարի հանույթի հունվար ամսի պլանը մենք կատարել ենք 105,8 տոկոսով, նախապատրաստման աշխատանքների պլանը կատարվել է 167, լեռնա-կապիտալ աշխատանքների պլանը՝ 241, շահագործողական հետախուզման պլանը՝ 106 և հեռանկարային հետախուզման պլանը՝ 103 տոկոսով։

Ալավերդու հանքավարչության համար սրանք կարևորագույն ցուցանիշներ են հանդիսանում, սակայն սխալ կլիներ ասել, թե մենք արդեն ամեն բան արել ենք։ Ընդհակառակը, մենք նոր ենք միայն սկսում աշխատել ինչպես հարկն է։ Մենք դեռ ունենք շատ թերություններ, որոնց վերացման ուղղությամբ պետք է աշխատենք առանց ձեռքերս ծալելու։

Նախ՝ հարկավոր է է՛լ ավելի բարելավել օպերատիվ աշխատանքը, բոլոր օղակներում ապահովել պարտիական կազմակերպության վերահսկողությունն արտադրության նկատմամբ, հարկ եղած բարձրության հասցնել ագիտացիոն-մասսայական աշխատանքը և պարտիական-քաղաքական աշխատանքը սերտորեն կապակցել արտադրական հարցերի հետ։

Մենք դեռ ունենք շատ բանվորներ, որոնք չեն կատարում իրենց նորմաները։ Անհրաժեշտ է ստեղծել այնպիսի պայմաններ, որպեսզի բոլոր բանվորներն աշխատեն սեմիվոլոսյան մեթոդով և գերակատարեն արտադրական նորմաները։

Հետախուզական աշխատանքների պլանը ժամանակին չկատարելը, եղած պաշարները համապատասխան չափով շնախապատրաստելը լուրջ վտանգ է ստեղծում հանույթի պլանի կատարման համար։ Անհրաժեշտ է կարճ ժամանակում բարելավել այդ գործը։

Պարտիական կազմակերպությունը լայնորեն մասսայականացնելով առաջավորների փորձը, բոլոր ջանքերը կգործադրի ամենուրեք արմատավորելու բազմահանքախորշային աշխատանքի մեթոդը և ավելի բարձրացնելու աշխատանքի արտադրողականությունը։

Բ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

(Շամլուղի հանքերի պարտբյուրոյի քարտուղար)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱԾԵՍ ԹԱԳԱՎՈՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*)

1906 և 1932 թվականներին Սևանի շրջակայքում գտնված և Հայաստանի պետական Քանդարանում պահվող երկու արձանագրերը մինչև այժմ մնում էին որպես հանելուկ։ Ճիշտ է, մի քանի տարի առաջ ճիշտ կարծիք էր արտահայտվել, որ այդ քարերի արձանագրությունները գրված են արամեական այբուբենով, սակայն, ո՛չ դրանց բովանդակության, ո՛չ էլ թեկուզ լեզվի մասին ոչ ոք չէր կարող որոշ բան ասել։ Երկու մակագրությունների առաջին տողերում կարդում էին Արտաքսերքս անունը, որի հիման վրա հնարավոր էին համարում այդ արձանաքարերը վերագրել Աքեմենյանների ժամանակներին։ Ուշի-ուշով քննելով Սևանի արձանաքարերը, ըստ լուսանկարների և էստամպաժների, ես, հատկապես որպես սեմիտոլոգ, առաջին քայլն եմ անում այդ կարևոր հուշարձաններն ուսումնասիրելու գործում, դրանով իսկ ճանապարհ հարթելով հայագետների համար, որոնք անշուշտ պետք է ամեն կերպ շարունակեն իմ ձեռք բերած արդյունքները։ Ներկա հոդվածը համառոտ շարադրություն է այն հատուկ զեկուցման, որը կարդացել եմ վերջերս Պետական էրմիտաժի Արևելյան բաժնի նիստում։

Սևանի քարերի արձանագրությունները գրված են հին արամեական այբուբենով։ Այդ այբուբենը, որն անմիջականորեն ծագում է փունիկյան այբուբենից, Աքեմենյանների ժամանակ և նրանցից հետո տարածված է եղել ոչ միայն համարյա ամբողջ Առաջավոր Ասիայի տերիտորիայում, այլև մասամբ Եգիպտոսում։ Հայտնի են Փոքր Ասիայի տերիտորիայում գտնված արամեական մակագրություններ, ընդ որում տաստիկ վնասված կրկնակի հույն-արամեական արձանագրություն երևան է բերվել Փոքր Հայքում։ Այդ փոքրասիական արձանագրությունների արամեական գրի ձևը որոշ առանձնահատկություններ ունի և նույն առանձնահատկություններն ենք գտնում մենք Սևանի արձանագրությունների մեջ, որ այդպիսով կարելի է վերագրել հին-արամեական գրի փոքրասիական հուշարձանների խմբին, իսկ ինչ վերաբերում է Սևանի մակագրությունների ժամանակին, ապա, մնալով փոքրասիական խմբի սահմաններում, մենք լիակատար հիմք ունենք դրանք վերագրելու մեր թվագրությունից առաջ երկրորդ դարին— դրանց տառերը շատ մոտ են (նույնիսկ համարյա նույնն են) Արաբիսոնի (Կապադովկիայի) հուշակավոր արամեական արձանագրությունների տառերին, որոնք սեմիտական արձանագրությունների խուզարգույն գիտակների կարծիքով պետք է պատկանեն հատկապես այդ դարին։ Սևանի արձանագրությունների բովանդակությունը, ինչպես մենք այժմ կտեսնենք, ոչ միայն չի հակասում այդ թվագրությանը, այլև հաստատում է։

Ելնելով փոքրասիական խմբի և առաջին հերթին Արաբիսոնյան հուշարձանների հին արամեական արձանագրություններից, Սևանի հուշարձանների տեքստը կարելի է կարդալ առանց դժվարության։ Սեմիտական գրի հիմնական օրենքով, այդ տեքստը բաղկացած է միմիայն բաղաձայն հնչյուններից, որոնց վերաբերում է նաև կոկորդային հաղագը, այսպես կոչված ալեֆը։ Սակայն, այդ հաղագը, ինչպես նաև ե տառը, ըստ էության բաղաձայն հնչյուններ լինելով, երբեմն գործածվում են նաև ձայնավորները նշելու համար, ընդ որում առաջինը նշանակում է ա հնչյունը, իսկ երկրորդը՝ ի և ե հնչյունները։ Մնացած ձայնավորները ընթերցողը պետք է ինքն ավելացնի։

Սևանի երկու արձանագրությունների վրա էլ տեքստից լրիվ կամ մասամբ պահպանվել են չորսական տող։ Մնացել են նաև հինգերորդ տողի հետքերը, որ ցույց է տալիս, թե տեքստն ունեցել է շարունակություն։ Բացի դրանից, հուշարձաններից մեկը պահպանվել է վնասված ձևով, այ եզրը կտրված է և նրա մակագրության առաջին երեք տողերի սկիզբը մենք վերականգնում ենք մյուս հուշարձանի տեքստի հիման վրա*)։ Հաղորդում եմ երկու արձանագրությունների տրանսկրիպցիան հայկական տառերով, ավելացնելով առաջին տողում հաղագը (՝), որն այստեղ



ա ձայնավոր հնչյունի նշանն է։ Ընդհանին պետք է նշել, որ տրանսկրիպցիան պետք է կարդալ ձախից աջ, այնինչ արձանագրությունը գրված է աջից ձախ ուղղությամբ։

Երկու արձանագրությունների տեքստի առաջին երեք տողերը ես կարդում և հասկանում եմ հետևյալ կերպ։ Առաջին տողը պարունակում է անունը։ Այդ անունը, ավելացնելով ձայնավորները, պետք է ըստ երևույթին կարդալ այսպես՝ (Արտախշ(ե)սե (ես ե տառը փակագծի մեջ եմ վերցնում, որովհետև համոզված չեմ, թե այդտեղ ձայնավոր եղել է, թե ոչ)։ Հազիվ թե կարելի լինի տարակուսել, որ դա նույն այն անունն է, որը կարելի է գտնել Ստրաբոնի և հունական այլ գրողների մոտ հելլենացված ձևով՝ Արտաքսիաս։ Զի՞ որ եթե մենք դեն գցենք հունական աս վերջավորությունը, կստանանք Արտաքսի ձևը, որը միանգամայն համապատասխանում է Արտախշ(ե)սե ձևին [կամ Արտախշ(ե)ս] ձևին, նկատի առնելով, որ հունարեն ksն տալիս է հույնի համար դժվար արտասանելի խշ(ե)ս հնչյունային զուգակցությունը։ Այդպիսով մենք գտնում ենք այն անձը, որի մասին խոսվում է Սևանի արձանագրությունների մեջ և որն, անտարակույս, կանգնել է երկու արձանաքարերը՝ դա Արտաքսին կամ Արտաշեսն է, սկզբում սելևկյանների սատրապը, իսկ հետո, Մաղնեսիի մոտ տեղի ունեցած կռվից հետո (մեր թվարկությունից 189 տարի առաջ)— Արևելյան Հայաստանի ինքնուրույն թագավորը, հայկական պետության հիմնադիրը։ Հայաստանը հենց նրանից էլ սկսում է իր իրական պատմական գոյությունը։

Երկրորդ տողը բաղկացած է երեք տառից։ Այդ երեք տառերն էլ արամեական են։ Առաջին բառն է մլեֆ և նշանակում է՝ «թագավոր»։ Երկրորդ բառը, ինչպես Փոքր Ասիայում գտնվող մի քանի այլ արամեական մակագրությունների մեջ, շաղկապված գրություն ունի, կարդացվում է՝ բար և նշանակում է «որդի»։ Երրորդ բառն է՝ զի, դա արամեական մի մասնիկ է, որը ցույց է տալիս, թե նրան հաջորդող բառը գրված է սեռական հոլովով։ Այդպիսով, երկու տողում գրված է՝ «Արտաշես թագավոր, որդի···»։ Միանգամայն բնական է, որ երրորդ տողում պետք է սպասենք Արտաշեսի հոր անունը և իրոք երրորդ տողում մենք կարդում ենք՝ «Զարիքիր»։ Ոչ մի տարակույս չի կարող լինել, որ դա նույն այդ անունն է, որը Սարգարոնի և հունական հեղինակների մոտ ունի Զարիադրես ձևը, միջնադարյան հայերենում արտասանվում է Զարեհ, իսկ միջնադարյան պարսկերենում՝ Զարիր։ Հետևաբար, երրորդ տողից մենք իմանում ենք, որ Արտաշեսի հայրը կրել է Զարեհ (Զարիադր) անունը և թագավոր չի եղել, որովհետև նրա անունից հետո արքայական տիտղոս չկա։ Ինչպես հայտնի է, հայկական պետության հիմնադրի հոր անունը ոչ մի պատմական աղբյուրի մեջ չի պահպանվել և այդ պատճառով Սևանի արձանագրություններն այդ տեսակետից առանձնապես արժեքավոր են։

Այդպես ուրեմն, առաջին երեք տողում մենք միանգամայն պարզ և ինչպես ինձ թվում է, անտարակուսելիորեն կարդում ենք՝ «Արտաշես թագավոր, որդի Զարեհի»։ Սևանների հենց այդ կարգը (այսինքն առաջին տեղը դրվում է արձանագրության հվանական անձի անունը տիտղոսով և երկրորդ տեղը՝ նրա հոր անունը) այստեղ միանգամայն բնական է։ Այդ կարգը նման տիպի արձանագրությունների մեջ գոյություն ունի շատ-շատ լեզուներում ու նախ և առաջ՝ արամեական լեզվում։ Վերջինը մեզ համար առանձնապես կարևոր է, որովհետև Սևանի արձանագրությունները, անտարակույս, ըստ իրենց հիմնական լեզվի արամեական չլինելով, հասնում են արամեական արքայական արձանագրությունների տրադիցիաներին, պահպանելով նույնիսկ արամեական բառերը տիտղոսագրության և թագավորի անվան մեջ։ Անունների նույն տեսակ կարգ գոյություն ունի, ինչպես հայտնի է նաև պահլավական արձանագրությունների մեջ, որոնք նույնպես հիմնված են արամեական տրադիցիայի վրա։

Որ Սևանի արձանագրությունների հիմնական լեզուն, չնայած նրանց մեջ հանդիպող արամեական բառերին, չի կարող արամեական լինել, մենք կատարելապես որոշակի կերպով իմանում ենք չորրորդ տողից, որը արամեական լեզվով ոչ մի իմաստ չունի։ Ես նախ ենթադրեցի, թե այդ տողի առաջին չորս տառերը կարող են կազմել Արտաշեսի կողմից տասալված տեղական կառավարչի անունը՝ Օրոնտես կամ Երվանդ, սակայն այդ ենթադրությունը հաղիվ թե հիմնավոր լինի, որովհետև տվյալ անունը պետք է սկսվեր մի ձայնավոր հնչյունով, որն արամեական գրության մեջ նշանակվում է հաղագի միջոցով (ալեֆ)։ Այն հարցը, թե ի՞նչ լեզվով է գրված Սևանի արձանագրությունների չորրորդ տողը և ուրեմն ո՞րն է այդ մակագրությունների հիմնական լեզուն,— պետք է լուծեն, ի հարկե, հայագետները։ Ես բնավ հայագետ չլինելով, այնուամենայնիվ իմ զեկուցման մեջ հայտնեցի այն ենթադրությունը, թե դա ամենից ավելի բնականորեն հին հայկական լեզուն պետք է լինի այն ձևով, որը գործածվել է ներկա պահին հայտնի հայկական ամենահին տեքստերից ամբողջ հինգ դար առաջ։ Սակայն անհավանական ոչինչ չկա, եթե այդ արձանագրությունները, պահլավական լեզվով լինեն՝ պետք է վերհիշել հին Հայաստանի և Իրանի քաղաքական փոխհարաբերությունները, այդ երկու երկրների կուլտուրական սերտ կապը և վերջապես այն, որ հին Հայաստանում, տեղական ժողովրդական պաշտամունքների հետ միասին, տարածված է եղել նաև զրադաշտիզմը։ Չորրորդ տողը ճիշտ հասկանալուց է կախված նաև Սևանի արձանաքարերի նպատակը ճիշտ որոշելը՝ արդյոք դրանք սահմանաքարե՞ր են, թե ուղեղնիշ սյուներ, թե՞ գրված են որևէ հատուկ իրադարձություն նշանավորելու համար։

Իմ զեկուցման նյութը ինձ հնարավորություն տվեց հետևյալ եզրակացություններն անելու.

1) Սևանի արձանաքարերը հանդիսանում են Հայաստանում առայժմ հայտնի հնագույն արքայական արձանագրությունները։ Դրանք կառուցել է հայկական պետության հիմնադիր Արտաշես առաջինը մեր թվարկությունից առաջ երկրորդ դարում։

2) Սևանի արձանաքարերից մենք իմանում ենք Արտաշեսի անվան իսկական հին ձևը, ինչպես նաև նրա հոր անունը (Զարիքիր—Զարեհ), որը ուրիշ ոչ մի տեղ չի պահպանվել։

3) Սևանի արձանաքարերը ցույց են տալիս, որ Հայաստանի հնագույն թագավորները, հունական գրի հետ միասին, որ գտնում ենք մենք դրամների վրա, գործածել են նաև հին արամեական գիրն այն ձևով, որը գոյություն ուներ Փոքր Ասիայում դեռ Աքեմենյանների ժամանակներից։

4) Վերջապես, Սևանի արձանաքարերը հնարավորություն են տալիս հարուցելու այն հարցը, որ հին հայկական թագավորները դիր են տեղադրել պահլավական ձևով, այսինքն՝ արամեական տառերը գործածել են հայկական լեզվի մեջ, կիրառելով նույնիսկ արամեական առանձին բառեր, որոնք արտասանվում էին հայերեն։ Եթե վերջին հարցին հաջողվի դրական լուծում տալ, ապա Սևանի գրությունները ուղղակի կհաստատեն հայկական հին պատմիչների այն խոսքերը, թե նախ քան անգրագիտությունն հնարելը, հայերն օգտվում էին ասորական (այսինքն՝ արամեական) տառերից։

Սրանք են իմ զեկուցումից բղխող հետևությունները։ Սևանի արձանագրությունները վերջնականապես ու բազմակողմանիորեն մշակելու աշխատանքը կատարում է ներկայումս ակադեմիկ Ի. Ա. Օրբելին, որը հնարավոր է համարում տեսնել դրանց մեջ հայկական լեզվի հնագույն հուշարձանները։ Սևանի արձանագրությունները, անտարակույս, միակը չեն Հայաստանի տերիտորիայում։ Պետք է ցանկալի, որ հայկական հասարակությունն օգնություն ցույց կտա գիտնականներին՝ հայկական գրի ամենահին էպոխան լուսաբանելու այդ կարևոր ու դժվարին գործում, գրի առնելով և հավաքելով ամեն տեսակ հուշարձաններ, որոնց վրա փոքրագրված են առայժմ չուսումնասիրված գրեր։

Գեոտական էրմիտաժի պրոֆեսոր՝
Ա. ԲՈՐԻՍՈՎ

*) Արձանագրության հայերեն վերարտադրության մեջ քառակուսի փակագծերում առածը վերականգնվածն է։

*) Խմբագրության հատուկ պատվերով, Լենինգրադի էրմիտաժի պրոֆեսոր Բորիսովը մեր թերթի համար ուղարկել է այս հոդվածը՝ Սևանի արձանագրությունների վերծանման մասին։

ՆԿԱՐՈՒՄ.— Սևանի շրջանում գտնված արամեական արձանագրությունները (Երևանի պատմական թանգարան)։ Լուսանկարը՝ Գ. Զալազյանի

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

Ա.Թ. ԽՆԿՈՅԱՆԻ ԸՆՏԻՐ ԵՐԿԵՐԻ ՄԻՀԱՏՈՐՅԱԿԸ

Գեհարքաղաքը լույս է ընծայել նշանավոր մանկական գրող, տաղանդավոր Ա.Թաբեկ Խնկոյանի (Խնկո Ապեր) ընտիր երկերի միհատորյակը։

Խնկոյանի գրող ու անդաստիարակ երգերը, խորհրդատու առակները, զեղեցիկ ու գրավիչ հեքիաթները, պատմվածքները հեղինակի համար ինքնուրույն ու պատվավոր տեղ են նվաճել մեր գրականության մեջ։

Բնչինգու հայացքով մանկական գրողը պետք է ծանոթ լինի մանկան հոգեբանությանը, հարթի ամենափոքր երկեր, որ նրա մեջ դասախրատվեն լավագույն գաղափարները, կրթեն ճաշակն ու վարվեցողությունը և դաստիարակեն զեղեցիկ խոսելու կարողությունը։

Ա.Թ. Խնկոյանը հենց այդպիսի մանկական գրող է։ Նրա ստեղծագործությունները սոցիալական ու էսթետիկական բարձր արժեք են ներկայացնում և դաստիարակչական խոշոր նշանակություն ունեն։ Սերունդներ են կրթվել Խնկոյանի երգերով ու առակներով, պոեմներով ու պատմվածքներով։

Ընտիր երկերի միհատորյակը բաղկացած է հետևյալ բաժիններից՝ բանաստեղծություններ, առակներ, պոեմներ, պատմվածքներ և հեքիաթներ։ Ինքնուրույն գործերի հետ միասին ներկայացված են Խնկոյանի՝ Կռիլովից, Ժուկովսկուց, Պուշկինից, Մաքլակից և այլ հեղինակներից կատարած թարգմանություններն ու փոխադրությունները։ Առաջին բաժնում զետեղված են Խնկո Ապեր պիոներական երգերը, ուսման հարվածայիններին, կենդանիների և ծաղիկների, տարվա չորս եղանակների մասին գրված ոտանավորները, աշխատանքային ներբողները։ Բանաստեղծությունների այդ ընտիր ու բուրավետ ծաղկեփնջի մեջ տաղանդավոր գրողը կոչ է անում մանուկներին սիրել աշխատանքը, գիրքը, գերազանց սովորել, հարգել ծնողներին ու ընկերներին։

Խնկոյանի՝ կենսուրախությամբ շնչող ոտանավորներից շատերը տարիներ շարունակ դասագրքերի գարդ են եղել, սիրվել ու բերանացի են արվել դպրոցականների կողմից, իսկ «Մեղուն», «Մի-ի-ն-ն-ա-կ-ն», «Զուկը», «Զմեռ պապին», «Նորեկ գեղջկուհին», «Արիկը» և մի շարք այլ գործեր մայրենիով են մտել են երգարանների մեջ։

Հարուստ ու հոսք է առակների բաժինը։ Այստեղ զետեղված են բանաստեղծի «Կուն ու աքլորը», «Ճանգան ու մրջյունը», «Մկները ժողովը», «Վագրն ու ագվեսը» և բազմաթիվ այլ նշանավոր գործեր։

Առակների ու հեքիաթների նյութը վերցնելով ժողովրդական բանահյուսությունից Խնկոյանը հետամուտ է եղել մի նպատակի՝ մշակելիս լուրջկանալ ֆոլկլորին, լիարժեքալ երգն, այլ հարազատորեն վերարտադրել հայ լինկանի ստեղծագործության բույրն ու հմայքը, հասն ու հոտը։ Այդ առակներում ու հեքիաթներում խարազանվում է բռնությունը, դավաճանությունը, ժլատությունը, նենգությունը և ընդհակառակը՝ փառաբանվում է մարդասիրությունը, աշխատասիրությունը, քաջությունն ու առատաձեռնությունը։

Ժողովածուում զետեղված հեքիաթների գերակշռող մասը կենդանական հեքիաթներ են (ճնճղասակի տունը, «Գղվեան ու գայլը», «Գուլուբ մի՝ նիկրը», «Ամոթով մնան և հարուստ ճնճղուկի հեքիաթը» և այլն)։

Այդ հեքիաթներում Խնկոյանը հավատարիմ պահպանել է կենդանական հեքիաթների հատկությունները։

Աղվեսը խորամանկության մարմնացումն է, գայլը՝ ագահության, աքաղաղը՝ գոռոզության, նապաստակը՝ վախկոտության և այլն։

Խնկոյանի հեքիաթներում լարը մինչև պարավում է և հաղթում է բարին, ընտանի կենդանիները թաքլիրին ու փորմանքի մեջ գտնվողներին օգնելիս ավելի խելոք, համարձակ ու քաջ են քան վայրի կենդանիները։ Կատուն հաղթում է ագվեսին, աքաղաղը հնարամտությամբ կատարում է այն, ինչ չեն կարողանում անել գայլն ու արջը ուժով։

Այս գիրքը նուիրելիս գալիս է կենդանական հեքիաթներից և դիցաբանական մատենագրության գրքերից։

Նվազ արժեքավոր չեն և Խնկոյանի գոլեմներն ու պատմվածքները, որոնք լուսաբանում են բազմազան թեմաներ (ռևոլյուցիա, սոցիալիստական շինարարություն, ինտերնացիոնալիզմ, կենդանական աշխարհ և այլն)։

«Մենն Հոկտեմբերը»-ը նրա լավագույն պոեմներից մեկն է, որի մեջ Խնկոյանը մատնանշելիս ու պատանիներին պատմում է ցարիզմի և բուրժուազիայի դեմ պրոլետարիատի՝ բոլշևիկյան պարտիայի գլխավորությամբ մղած հերոսական կռվի ու հաղթանակի մասին։

Բազմաստատակ գրողի ընտիր երկերի այս հատորը կազմված է խմբագրվ. Կազմող ընկ. Մ. Դուրգարյանը հաջողությամբ ընտրել է «Հանկերց»-ում, «Մանկություն» և «Հոգեկեր»-ում տպագրված Խնկոյանի լավագույն և արժեքավոր լավագույն գործերը, առանձին դրքույկներով հրատարակված ստեղծագործությունները և ամփոփել մի տարբ հատորի մեջ։ Ժողովածուն զարդարված է էդ. Մարգարյանի նկարներով։ Առաջաբանը գրել է ընկ. Սիմոնը, որը նկարագրելով Ա.Թ. Խնկոյանի կյանքը, միաժամանակ համառոտ կերպով բնութագրում է անվանի գրողի ստեղծագործությունները։

Անհրաժեշտ է նշել, որ Խնկոյանի ընտիր երկերի այս հատորը լինելով առաջինը, գերծ չի մի քանի թերություններից։ Ժողովածուն հրատարակված է մանուկների ու պատանիների համար։ Այդ տեսակետից անհրաժեշտ էր վերջում կցել մի բացատրական բառարան, որովհետև գրքում հանդիպում են այնպիսի դժվար հասկանալի բառեր (կուշ-կուշ, մխալ, լքուն, դոխ, ցուցանք, կուռն ու ճուռը, ագի, ամլիկ, լզկոր, վաղորդյան և այլն), որոնք շատ ընթերցողների համար անհասկանալի կմնան։

Հատորում նյութերը բաշխելիս կազմողն առաջնորդվել է ժանրային սկզբունքով, բայց թե ինչու պոեմներն ու պատմվածքները, որոնք տարբեր ժանրերի գործեր են, մի ընդհանուր բաժնում են զետեղված—մնում է անհասկանալի։

Անհրաժեշտ էր ստեղծագործությունների տակ դնել նրանց հրատարակման թվականները։

Նշված թերությունները հարկավ չեն կարող նսեմացնել այն շնորհակալ աշխատանքը, որ կատարել է Պետհրատը՝ հրատարակելով Ա.Թ. Խնկոյանի ընտիր երկերի միհատորյակը։ Այս գիրքը սիրով ու հաճույքով կկարդան ոչ միայն փոքրերը՝ ծանոթանալու ու պատանիները, այլև մեծահասակները։

Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ

ՊՐՏԵՐԱԶՄԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԵՎ ԱՖՐԻԿԱՅՈՒՄ

(ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԻՐ)

Հյուսիսային Աֆրիկայում շարունակվում են գերմանական ու իտալական ավիացիայի հարձակումները Բենղազիի և Կիրենայիկայի ժայռ կեռների վրա, որոնց դրավված են անգլիացիների կողմից։ Գերմանական ռմբակոծիչները,— հաղորդվում է գերմանական ամփոփագրի մեջ,— Կիրենայիկայում ռմբակոծել են անգլիացիները, զինվորական համարները, ինչպես նաև օգնավաճառանցքերում գտնվող ինքնաթիռները։

Իտալական «Լեոնա գել Կարնո» թերթը քննարկելով Աֆրիկայում տեղի ունեցած պատերազմի դրությունը,— հայտարարում է, թե Բենղազիի, Աբեսինյան Լիվիայի այդ լավագույն նավահանգստի գրավումն անգլիացիների կողմից, Մեջերդայի նավի ավարառում տեղի է նոր դրություն։ Թերթը նշում է, թե անգլիացիներն ունեցողների թվերնց սիրողությունը Մեջերդայի նավի արևելյան մասում, իսկ հունական թերակղզում, Գրեան կղզում և Կիրենայիկայում բազմաթիվ տեղերում նրանց տալիս մեկնելի դիրքերը մինչև մեջերդայան ավարանի գենարալական մասը։ Ավելացնելով,— նշում է թերթը,— նավի այդ մասում գերակշռությունն իտալական ուժերի կողմն է։ Թերթը գտնում է, որ Սիրտ անապատի վրայով արձակված ուղղությամբ մինչև Տրիպոլիտանիայի գենարալ գենարալներն անգլիական զորքերի հարձակման դեպքում բրիտանական հրամանատարությունը չի կարող հույս ունենալ, թե իր նախատարը կկարողանա անապատի կենդանի անցնել Մեջերդայի նավի գենարալական մասում, որը վտանգավոր է նրա համար։

Գերմանական և իտալական ավիացիան նաև շարունակում է հարձակումները Մալթայի—Մեջերդայի նավի գենարալական մասում Անգլիայի այդ կարևորագույն հենակետերի բազայի վրա։ Մալթան որպես մի կղզի օգտակ է հանդիսանում անգլիական մյուս հենակետերի մեջ— արձակելով Զորքերի և արձակելով։ Ավելացնելով։ Անգլիացիների անասիաղացումը Լիվիական նավափին, անասարակ, բարելավում է Մալթայի սարսափելի դրությունը։

Անգլիացիները,— ասվում է իտալական ամփոփագրի մեջ,— փորձել են փետրվարի լույս 11-ի գիշերը մի խումբ պարաշյուտավորներ իջեցնել Կալաբրիայում և Լուկանիայում (Իտալիայի հարավային գավառներ)։ Պարաշյուտավորները գինված են եղել գնդացիրներով, ձեռքի նռնակներով և պայթուցիկ նյութերով։ Նրանց բոլորն էլ գերի են վերցվել։ Անգլիական ավիացիան նաև հարձակումներ է գործել Բոգոս կղզու վրա։

Արևելյան Աֆրիկայում հիմնական պատերազմական գործողությունները տեղի են ունեցել Էրիթրեայում։ Իտալական հրամանատարությունը ամփոփագրի համաձայն, անգլիացիների գրավը հեռանի չեն հետ է մղվել։ Անգլիական գորքերը համարյա չեն պատերազմ են ունեցել ամբարված հեռն կենտրոնում։ Մի քանի տեղերում,— ինչպես նշում է թերթը գործակալության հաղորդագրությունը,— թշնամի կրակոցներ Բոգոսի վրա։

Արևելյան Աֆրիկայում հիմնական պատերազմական գործողությունները տեղի են ունեցել Էրիթրեայում։ Իտալական հրամանատարությունը ամփոփագրի համաձայն, անգլիացիների գրավը հեռանի չեն հետ է մղվել։ Անգլիական գորքերը համարյա չեն պատերազմ են ունեցել ամբարված հեռն կենտրոնում։ Մի քանի տեղերում,— ինչպես նշում է թերթը գործակալության հաղորդագրությունը չի կարող հույս ունենալ, թե իր նախատարը կկարողանա անապատի կենդանի անցնել Մեջերդայի նավի գենարալական մասում, որը վտանգավոր է նրա համար։

Գերմանական և իտալական ավիացիան նաև շարունակում է հարձակումները Մալթայի—Մեջերդայի նավի գենարալական մասում Անգլիայի այդ կարևորագույն հենակետերի բազայի վրա։ Մալթան որպես մի կղզի օգտակ է հանդիսանում անգլիական մյուս հենակետերի մեջ— արձակելով Զորքերի և արձակելով։ Ավելացնելով։ Անգլիական ավիացիան նաև հարձակումներ է գործել Բոգոս կղզու վրա։

Արևելյան Աֆրիկայում հիմնական պատերազմական գործողությունները տեղի են ունեցել էրիթրեայում։ Իտալական հրամանատարությունը ամփոփագրի համաձայն, անգլիացիների գրավը հեռանի չեն հետ է մղվել։ Անգլիական գորքերը համարյա չեն պատերազմ են ունեցել ամբարված հեռն կենտրոնում։ Մի քանի տեղերում,— ինչպես նշում է թերթը գործակալության հաղորդագրությունը չի կարող հույս ունենալ, թե իր նախատարը կկարողանա անապատի կենդանի անցնել Մեջերդայի նավի գենարալական մասում, որը վտանգավոր է նրա համար։

Գերմանական և իտալական ավիացիան նաև շարունակում է հարձակումները Մալթայի—Մեջերդայի նավի գենարալական մասում Անգլիայի այդ կարևորագույն հենակետերի բազայի վրա։ Մալթան որպես մի կղզի օգտակ է հանդիսանում անգլիական մյուս հենակետերի մեջ— արձակելով Զորքերի և արձակելով։ Ավելացնելով։ Անգլիական ավիացիան նաև հարձակումներ է գործել Բոգոս կղզու վրա։

Արևելյան Աֆրիկայում հիմնական պատերազմական գործողությունները տեղի են ունեցել էրիթրեայում։ Իտալական հրամանատարությունը ամփոփագրի համաձայն, անգլիացիների գրավը հեռանի չեն հետ է մղվել։ Անգլիական գորքերը համարյա չեն պատերազմ են ունեցել ամբարված հեռն կենտրոնում։ Մի քանի տեղերում,— ինչպես նշում է թերթը գործակալության հաղորդագրությունը չի կարող հույս ունենալ, թե իր նախատարը կկարողանա անապատի կենդանի անցնել Մեջերդայի նավի գենարալական մասում, որը վտանգավոր է նրա համար։

Գերմանական և իտալական ավիացիան նաև շարունակում է հարձակումները Մալթայի—Մեջերդայի նավի գենարալական մասում Անգլիայի այդ կարևորագույն հենակետերի բազայի վրա։ Մալթան որպես մի կղզի օգտակ է հանդիսանում անգլիական մյուս հենակետերի մեջ— արձակելով Զորքերի և արձակելով։ Ավելացնելով։ Անգլիական ավիացիան նաև հարձակումներ է գործել Բոգոս կղզու վրա։

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՆԱՎԱՏՈՐՄԻ ՎԵՐՋԻՆ ՇԱՖԱԹՎԱ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԲԵԹԼԻՆ, 14 (ՏԱՍՍ).— Գերմանական ինֆորմացիոն բյուրոյի հաղորդագրությամբ, գերմանական զինված ուժերի գործողությունների հետևանքով, Անգլիան փետրվարի 4-ից մինչև 11-ը, մի շաբաթվա մեջ, կորցրել է մեծագույն քվով նավեր։ Գերմանական հրամանատարության տվյալներով, այդ ժամանակամիջոցում ջրասույզ են արվել անգլիական առևտրանավեր՝ 117·500 ռեգիստրային բրուտտոնանոցա ընդհանուր ջրատարողությամբ։ Այդ քանակից 73·500 ռեգիստրային բրուտտոնանոցը ոչնչացրել է գերմանական ռազմաթռչային նավատորմը (40·000 ռեգիստրային բրուտտոնանոցը՝ բաց ծովում գերմանական ռեյդերն ու 33·500 ռեգիստրային բրուտտոնանոցը՝ սուզանավերը) և 44·000 ռեգիստրային բրուտտոնանոցը՝ ականներ։

ՊԱՐԵՆԱՄԱԳԵՐԻ ԱՐՏԱԿԱՐԳ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄՆ ԱՆԴԻԼԱՑՈՒՄ

ԼՈՆԴՈՆ, 14 (ՏԱՍՍ).— «Դեյլի Հերալդ» թերթը գրում է, որ Անգլիայում մշակվում է գերմանական ներխուժման կասարվելու դեպքում բնակչությունը պարենամթերքով ապահովելու պլանը։ Ամբողջ երկրում ստեղծվում են թվ՝ արագ փչացող և թե չփչացող մթերքների արտակարգ պաշարներ։ Բոլոր սառցատնային պահեստները ամբողջապես լցվում են պարենամթերքով։ Հատուկ ուշադրություն է կցվում, որպես ամրակնքության ենթարկված խանութի սերը մթերքը է սառեցնում այլ խանութների սերերից, ինչպես նաև արտակարգ պաշարներից։ Պատահանում չրքանների ասելով, այդ պլանը, ներխուժման դեպքում, խանութները կապահովի անհրաժեշտ քանակությամբ պարենամթերքի հիմնական տեսակներով։

ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆՅՈՒ-ՅՈՐՔ, 14 (ՏԱՍՍ).— Համաձայն Ասոշիեյթեդ Պրես գործակալության Սիդնեյ Թրթակցի հաղորդագրության, «Մելբոռն» հանձնարարությամբ վերադարձել է Ավստրալիա։ Թղթակցի կարծիքով այդ վկայում է, որ Ավստրալիան իր նախատարը կենտրոնացնում է իր շրջանում։ Հեռավոր Արևելքում անգլիական զինված ուժերի գլխավոր հրամանատար մարշալ Բրուկ-Պոպհեմը, որը փետրվարի 12-ին եկել էր Սիդնեյ, առաջարկել է ռազմական կրթությունի փետրվարի 14-ին նիստ գումարել։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԲԼՈԿԱԴԱՅԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՎՐԱ

ԼՈՆԴՈՆ, 15 (ՏԱՍՍ).— Անգլիայի անտառային պատերազմի մինիստրությունը հայտարարել է, որ ռումինական տերիտորիան հետագայում կդիմի որպես հակառակորդի նկատմամբ օգտակարություն ունեցող ինքնաթիռների տերիտորիա։ Այդ պատճառով էլ փետրվարի 15-ից սկսած Ռումինիայի վրա տարածվում է անգլիական բլոկադան։

ՌԵՅՏԵՐ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԼՈՆԴՈՆ, 14 (ՏԱՍՍ).— Ռեյտեր գործակալության հաղորդագրությամբ, ռումինական գործերի հավատարմատար Լոնդոնում՝ Ֆլորեսկուն և մոսկվայի կցորդ Մուրգուն, որոնք պետք է մեկնեին Ռումինիա, հրաժարվել են վերադառնալ իրենց երկիրը։

ՎԵՐՋԻՆ ՓԱՍ

ԱՆԳԼՈ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊՐՏԵՐԱԶՄԸ

ԲԵԹԼԻՆ, 15 (ՏԱՍՍ).— Գերմանական հրամանատարությունը հաղորդում է. երեկ մեր մարտանավերը հարձակվեցին Անգլիայի հարավ-արևելյան նավամատույցների վրա։ Հաջողությամբ մեր ինքնաթիռները ռմբակոծեցին Հալլանդիայի նավամատույցը։ Հաջողությամբ մեր ինքնաթիռները ռմբակոծեցին անգլիական մեծ ինքնաթիռ։

Փետրվարի լույս 15-ի գիշերը գերմանական ավիացիան խոշոր կալվածքի ռումբեր է նետել Լոնդոնի արդյունաբերական օրեկներին և մի քանի օդանավակայանների վրա։ Նետվել են պայթյունավոր և հրդեհային։

Անգլիական ինքնաթիռները փետրվարի լույս 15-ի գիշերը ռմբակոծել են Արևմտյան Գերմանիայի քաղաքներից մեկը։ Կան զոհեր ու վիրավորներ։ Վնասվել է մի քանի տուն։

Ինֆորմացիոն բյուրոյի հաղորդագրությամբ, անգլիական երկու ռմբակոծիչ փետրվարի լույս 15-ի գիշերը հարձակում են գործել Հարավային Նորվեգիայի վրա։ Ռմբակոծման և արդյունաբերական օրեկները չեն տուժել։

* * *

ԼՈՆԴՈՆ, 15 (ՏԱՍՍ).— Ինչպես հաղորդում է Ռեյտեր գործակալությունը, գերմանական ինքնաթիռները փետրվարի լույս 15-ի գիշերը ռումբեր են նետել Լոնդոնի մի շարք շրջանների վրա։ Բնակչության մեջ կան զոհեր։ Մի շարք տեղերում առաջացել են հրդեհներ։ Գերմանական ինքնաթիռներն ավելի խոշոր ակտիվություն են ցուցաբերել Անգլիայի արևելյան առափնյա շրջանում, որտեղ հակառակորդը նետել է դյուրավառ ռումբեր։ Անգլիական ավիացիան փետրվարի լույս 15-ի գիշերը հարձակում է գործել Ռուրի մարզի արդյունաբերական օրեկների վրա։

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱԼԲԱՆԻԱՅՈՒՄ

ՀՈՌՄ, 15 (ՏԱՍՍ).— Իտալական հրամանատարությունը հաղորդում է. «Հունական ճակատում, շնորհիվ իտալական զորքերի նոր գործողությունների, կասեցվել են մեր դիրքերի վրա հարձակվելու փորձերը։ Հակառակորդը մեծ կորուստներ է կրել։

Էպիրոսի ծովի շրջանում փետրվարի 12-ին և 13-ին կատարված օդային հարձակումների ժամանակ ցած է գցվել հակառակորդի երկու ինքնաթիռ։

* * *

ԼՈՆԴՈՆ, 15 (ՏԱՍՍ).— Ինչպես հաղորդում է Ռեյտեր գործակալությունը, Ալբանիայի 130 կիլոմետր երկարությամբ ճակատում հունական բանակը շարունակում է իր հարձակումը։ Մի շարք շրջաններում հունական զորքերն իտալացիներին դուրս են մղել իրենց դիրքերից։ Ճակատի երեք կետերում մարտերն առանձնապես կատաղի բնույթ են կրել։ Այդ կետերից մեկում հունականները վերցրել են 7000 գերի, այդ թվում շատ սպաներ։

ՃԱՊՈՆԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՇԱՐԱՎՈՒՄ

ՆՅՈՒ-ՅՈՐՔ, 14 (ՏԱՍՍ).— «Նյու-Յորք Թայմս» թերթի Հոնկոնգի թղթակիցը հաղորդում է, որ չինական աղբյուրներից ստացված տեղեկություններով ճապոնական ռազմական ու ծովային հրամանատարությունը, ինչպես նաև ավիացիայի ներկայացուցիչները, որոնք գտնվում են Հայնան կղզու վրա, այս շաբաթվա ընթացքում քննարկել են դեպի հարավ հարձակում գործելու հարցը։ Ինչպես հաղորդում են, ճապոնական մի քանի ռազմական նավեր ճապոնական ծովափի մոտով անցել են հարավային ուղղությամբ։ Բացի դրանից, Հայնան կղզին Ֆրանսիական Հնդկաչինի և Սպրատլի կղզին են գալիս ճապոնական համալրումներ։

ԱԲՈՎՅԱՆԻ ԳԵՐՄԱՆԵՐԻՆ ՁԵՌՆԱԿԻՐԵՐԸ

Հայտնի է, որ գրական քանդարանումն են պահվում հայ մեծ լուսավորիչ Մաշտոցը Արովյանի հարուստ ու բազմազանությունը։

Արովյանի քանդարանում եղած ձեռագրերը մեծ մասամբ գրված են հայերեն լեզվով, որին սպրդեն բավականին ծանոթ է մեր գրական հասարակությունը։ Արովյանի քղքերի մեջ կան նաև մեծ քանակություն գերմաներեն ձեռագրեր, որոնք մինչև օրս, չնչին բացառությամբ, չեն վերծանվել։ Այդ լեզվով են գրված բազմաթիվ նամակներ, ժողովրդական բանաստեղծություններ և այլ կարգի նյութեր, ինչպես օրինակ՝ «Մի ակնարկ Բիթլիսում ապրող հայերի և հանրագրեցիկ նրանց հարաբերությունների մասին», «Հայերի քարգմանված բառերի մասին», զրույցներից քարգմանված բառերի մասին, վերջինս ուսում է տեսել Ռ. Զարյանի կազմած Արովյանի ճնարաշավիգրում։ 1940 թ. Արգեն մեկ տարի է, որ գիտաշրջանը նուիրված ձեռնարկել է գերմաներեն նամակների քարգմանության գործը, որը հանձնված է հեղինակի ժառանգ Կ. Արովյանին։ Նա արդեն քարգմանել է Գրիգոր և վերջինիս մոր նամակները։ աշխատանքը շարունակվում է։ Սակայն մի մարդու ջանքերով անհնար է ողջանել Ս. Արովյանի քողած գերմաներեն բազմաթիվ ձեռագրերի վերծանումը։

Արովյանի ծննդյան 135-ամյա հոբելյանին արժանավայել կերպով նախապատրաստվելու կարևոր խնդիրներից մեկն էլ գերմաներեն ձեռագրերի վերծանման աշխատանքն է։

Ս. ՊԱՐԳԵՎՈՒՆԻ

«ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Արժիքը նախապատրաստում է հրատարակելու հարատարակ Թ. Թորոսմանյանի «Նյութեր հայ ճարտարապետության պատմության մասին» ժողովածուն, մոտ քառասուն մամուլից բաղկացած։ Այդ ժողովածուի մեջ զետեղվելու են Թ. Թորոսմանյանի բազմաթիվ ուսումնասիրությունների հիման վրա գրված նյութերը, ինչպես նաև լուսանկարները, որոնք վերաբերում են հայկական ճարտարապետական լավագույն հուշարձանների լուսաբանմանը և ճարտարապետական կառուցվածքներին։ Այդ կապակցությամբ կազմված է ժողովածուի խմբագրական կոլեգիա, որի կազմի մեջ մտնում են արվեստի վաստակավոր գործիչ Գ. Լևոնյանը, պատմական գիտությունների թեկնածու Մ. Ներսիսյանը, ավագ գիտաշխատող Կ. Ղաֆարյանը, ճարտարապետներ Ս. Մաֆարյանը, Գ. Մուշեղյանը և Վ. Հարությունյանը։

ԶՐՑՈՒՆՑԻՆ ԹԵՐԹԵՐԻ ԷՋԵՐԻՑ

★ Ի պատիվ Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի 23-րդ տարեդարձի, Համկ(բ)Պ 18-րդ համագումարի անվան սովխոզի ֆիզկուլտուրայի կազմակերպությունը ռազմականացված երթ կազմակերպեց։ Երթին մասնակցեցին 40 ֆիզկուլտուրիկներ։

Երթի մասնակիցները 7 կիլոմետր անցան հակագազերով։

(Աղաջանյան, «ՀՈՂԵՈՂ ՖՐՈՆՏ»)

★ Նոր Կողբ գյուղի կոլտնտեսությունում 1931 թվից մինչև 1938 թիվն աշխատանքի արժեքը 10 ռուբլուց ավելի չի եղել, այնինչ 1939 թվին կոլտնտեսականները յուրաքանչյուր աշխատանքի դիմաց ստացել են 31 ռ., իսկ 1940 թվին՝ 35 ռուբլի։

(Բերիա, «ՆՈՐ ԿՅԱՆՔ»)

ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Հ(բ)Պ Երևանի քաղկոմ № 77 սենյակն են կանչվում՝ Աբրահամ Յուրիի թոռնը, Վլադիմիր Եգորովիչ Գազանչանը, Գավիթ Գեորգիի կանչվածը, Հարությունի Աբկարի Խաչատրյանը, Գուրգեն Հարությունի Թովմասյանը։

Հ(բ)Պ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԿՈՄ

ՌԱԴԻՈՆ ԱՅՍՕՐ

8.00.— Տրանսլյացիա Մոսկվայից, 11.00.— Մրագրի հաղորդում, 11.10.— Հաղորդում փոքրահասակ դպրոցականների համար, Ծը բաղրում՝ «Ալի Բաբան և 40 ավազակները», 11.45.— Գրական-գեղարվեստական հաղորդում ուսերեն լեզվով, Ծրագրում՝ Զամբուլ (Գոռի Վասիլյևի մասին), 12.10.— Ինֆորմացիաներ, 12.30.— Հոգվածներ թերթերից, 13.00.— Համերգ-զրույց՝ «Ալուշ Շերամն», 14.15.— Տրանսլյացիա Մոսկվայից, 17.15.— Մրագրի հաղորդում և հայատարությունները, 17.30.— Համերգ— կամերային նվագախմբի նյութը՝ զեկավարությամբ Գ. Ցաղուրյանի, 18.00.— 18-րդ պարկոնֆերանսի նյութերի հաղորդումը, 18.30.— Հաղորդում պիոներների և դպրոցականների համար, Ծրագրում՝ «Հայկական ժողովրդական երաժշտություն», 19.00.— Համերգ— Ծրագրում՝ «Հարա Սահակյանց և Կարո Զաքարյանց», 20.00.— «Վերջին լուրերը»-ի տրանսլյացիա Մոսկվայից, 20.15.— «Գրականությանի առաջնագծի հաղորդումը», 20.30.— Սիմֆոնիկ համերգ, 21.00.— Տրանսլյացիա Մոսկվայից, 0.30.— «Վերջին լուրերը»-ի տրանսլյացիա Մոսկվայից, 1.10.— Համերգ— Ծրագրում՝ Ջազ երաժշտություն։

Պատասխանատու խմբագիր՝
ՀՐ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Ա. ՍԱՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵՆԻՆԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՕպԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԹԱՏՐՈՆ

Փետրվարի 16-ին երեկ. ԱՌՈՒՆԵՐԵՆ № 5 ԱԼՄԱՍ

Փետրվարի 18-ին ՊԻԿՈՎԱՅԱ ԴԱՄԱ

Փետրվարի 19-ին ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ ԱՆԱՀԻՏ

Սկիզբը երբ. ժ. 8-ին։ Սկիզբը ժ. 12-ին։ Տոմսերը վաճառվում են 50% զեղչով։

ՄՈՏ ՕՐԵՐՍ „ԿՈՇԿԱՎՈՐ ԿԱՏՈՒՆ"

Գ. ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏ. ԹԱՏՐՈՆ

XX ՀԱՐԵԼՅԱՆԱԿԱՆ ԹԱՏԵՐԱՇՐՋԱՆ XX

Փետրվարի 16-ին Դ. Գնդիրյան ԵՐԿԻՐ ՀԱՅՐԵՆԻ

Փետրվարի 19-ին Հ. Գասոյան ԱՌՈՒՆԵՐԵՆ № 5 ՄԵԾԱՊԱՏԻՎ ՄՈՒՐԱՑԿԱՆՆԵՐ

Սկիզբը երբ. ժ. 8-ին։

Փետրվարի 18-ին, ցերեկը ՍԵԾԱՊԱՏԻՎ ՄՈՒՐԱՑԿԱՆՆԵՐ

Տոմսերը վաճառվում են 50 % զեղչով։ Սկիզբը ժ. 12-ին։

Մոտ օրերս ՖՐԵՄՑԵՐԻ

Կ. Դալգանի ԲԱՄԲԱՍԱՆԸ ԵՎ ՍԵՐ (ՀԵՆՈՐՄՆԵՐ)

ԱՇՏԱՐԱԿ ՊԵՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՐՄԻՐ ԴՐՈՇԻ ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐ ՖԻԼՀԱՐՄՈՆԻԱ

Փետրվարի 16-ին ԱՇՈՒՂ ՋԻՎԱՆՈՒ Փետրվարի 16-ին

ԵՐԳԻ ԵՐԵԿՈ Հայ-թիլհարմոնիայի ԱՇՈՒՂԱԿԱՆ ԱՆՍԱՄԲԼԻ ԿԱՏԱՐՄԱՄԲ.

Սկիզբը երբ. ժ. 9-ին։

Փետրվարի 19-ին ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԻ ՈՒ ՊԱՐԻ ԱՆՍԱՄԲԼԻ ՀԱՄԵՐԳԸ Փետրվարի 19-ին

Գեղ. զեկ. արվեստի վաստ. գործ. Թ. ԱԼԹՈՒՆՅԱՆ, բարեժեշտանք՝ Է. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԺՈՂ. ԳՈՐԾ. ԱՆՍԱՄԲԼ. Գեղ. զեկ. գյուժանչիստ Դ. ՄԻՐԶՈՅԱՆ, ժամանակությամբ սոլիստուհի ՇՈՂԻԿ ՄԱՐՏՈՅԱՆԻ։

ԺՈՂ. ԳՈՐԾ. ԱՆՍԱՄԲԼ Գեղ. զեկ. Քառխոտ՝ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ, ժամանակությամբ սոլիստուհի ՄԱՐԻԿԱ ԱՎԱԿԻՄՅԱՆԻ։

Ջ. ՋԱՐԱԲԼԻԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Փետրվարի 16-ին Ու. Հայդիդենով (ՍՍՍՄ ժող. դեր. շքանշանակիր) ԱՐԾԻՆ ՄԱԼ-ԱԼԱՆ 5 գործողությամբ բեմադրություն՝ ռեժիսոր Նախսարխի։

Փետրվարի 17-ին Սարի Ռախման ՀԱՐՍԱՆԻՔ

Կոմեդիա 8 գործողությամբ։ Սկիզբը երբեկ. ժ. 6-ին։

Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏ. ՏԻԿՆԻԿԱՅԻՆ ԹԱՏՐՈՆ

Փետրվարի 16-ին Վ. Հարությունյան ԱՆԱՀԻՏ

Դրամա 9 գործողությամբ։ Սկիզբը երբեկոյան ժ. 7-ին։ Տոմսերը վաճառվում են։

ԺԿՄ-ին կից թերթերի և ամսագրերի տպարանին

ՀԱՐԿԱՎՈՐ ԵՆ

ԱՇԱԿԵՐՏՆԵՐ ԵՎ ՍԵՂԱԴՐՈՒ ԲԱՆՎՈՐՆԵՐ։ Գրքամանների ժամին դիմել տպարանի կադրերի բաժնին, ամեն օր առավոտյան ժամը 8-ից 4—30-ը։ ԴԻՐԵԿՑԻԱ

ՕԴԱՅԻՆ ԿԻՆՈՆԵՐՈՒՄ

„ՄՈՍԿՎԱ"

Փետրվարի 16-ին 1-ին և 2-րդ դահլիճներում Գեղարվեստական հնչուն նոր ֆիլմ

ՍՈՒՎՈՐՈՎ

Սեանսների սկիզբը 1-ին դահլիճ երբ. ժ. 6, 8 և 10-ին, 2-րդ դահլիճ 6—30, 8—30 և 10—30-ին։

Ցերեկվա սեանսների սկիզբը 1-ին դահլիճ ժ. 4-ին, 2-րդ դահլիճ ժ. 4—30-ին։

„ՆԱԻՐԻ" գեղ. հնչուն ֆիլմ

ԿՅԱՆՔԻ ԳԻՆԸ

Սեանս. սկ. երբ. ժ. 6, 8 և 10-ին։

„ՍԱՄՈՒՆՅԻ ԴԱՎԻԹ"

ՍՈՒՎՈՐՈՎ

Սեանսների սկ. երբ. ժ. 6, 8 և 10-ին։

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է ԴԵԶԸՆԵՄՈՒՐ

«ԿԱՄԻՐ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ» գործարանի Գ. կ. 1936 թվի արտադրության։

Դիմել՝ Թբիլիսի Լյուքսեմբուրգի փ. № 12, բնակարան № 1, երեկոյան ժամը 7—10-ը։

ՍԵԼԽՈԶՆԻՄՈՒՆԱՐ

ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆ

ավագ ռեվիզոր հաշվապահ, հաշվապահ հրահանգիչ և գանձապահ-հաշվետար։ Դիմել Շահումյան փողոց № 33, հեռ. № 38—45։

ՍԵԼԽՈԶՆԻՄՈՒՆԱՐ

ՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՌԱԴԻՈ-ԸՆԴՈՒՆԻՉՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՆՈՐ ԿԱՐԳԸ

Բոլոր ռադիո-ընդունիչները և նրանցից տարվող գծերը ենթակա են պարտադիր ԳՐԱՆՑՄԱՆ՝ (մեռք բերման օրից) քսանչորս երեք օրվա ընթացքում, չբնակիչներում՝ 10 օրվա ընթացքում։

Ռադիո-ընդունիչների և գծերի արտոնագրային վճարը ընդունվում է յուրաքանչյուր եռամսյակի սկզբին։

Ռադիո-ընդունիչների և գծերի հաշվառումը ու արտոնագրային վճարների ընդունումը կատարվում է Կապի ժողկոմատի տեղական բաժանմունքներում։

Վերոհիշյալ ժամկետին ռադիո-ընդունիչները և գծերը հաշվառման չենթարկողները տուգանվում են 50 ռուբլով, իսկ արտոնագրային վճարի ժամկետանցման՝ յուրաքանչյուր լրիվ և ոչ լրիվ ամիսների համար տուգանվում են 1 ռուբլով։

ՀԱՅԿԱԿԱՆ ՌԱԴԻՈ ԿՈՄԻՏԵ

ԿՈՐԵԼ Է

Հայկ Առաքելի Վարդանյանի № 1478843 պարտատոմսը։ Համարել անվավեր։

Ավտոմոբիլային տրանսպորտի բանվորների արհմիության ռեսպուբլիկական կոմիտեի Նախագահությունը խոր ցավակցություն է հայտնում ընկ. Մուշեղ Գևորգյանին, նրա որդու՝ ՌՈՒԲԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ վաղաժամ մահվան առթիվ։

Ռեսպուբլիկական մանկամարզական կենտրոնի գիրեկցիան, պարտ. և պրոֆ. կազմակերպությունները խոր ցավակցություն են հայտնում նույն կոլեկտիվի անդամ Շուշիկ Գևորգյանին, նրա որդու՝ ՌՈՒԲԻԿ ՄՈՒՇԵՂԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ վաղաժամ մահվան առթիվ։

Թ. և Ս. Նավակատիկյանները, Ա. և Ս. Շաքիրյանները, Ա. և Վ. Թովմասյանները, Մ. Սիմոնյանը, Զ. Շաքիրյանը, Մ. Հովհաննիսյանը, Շ. Գզրարյանը իրենց երեխաներով խոր ցավակցություն են հայտնում Մուշեղ և Շուշիկ Գևորգյաններին, նրանց սիրելի որդու՝ ՌՈՒԲԻԿԻ վաղաժամ մահվան առթիվ։

Բժշկական ինստիտուտի գիրեկցիան, պարտկազմակերպությունը և տեղական խորհուրդը խոր ցավակցություն են հայտնում բժ. Աստղուր Սարգսյանին, նրա հոր՝ ԱՆԴՐԵԱՍ ԱԳԱՐԻՑԱՆԻ մահվան առթիվ։

Ս. Էլոյանը, Բ. Ղազուրյանը, Մ. Խաչատրյանը, Գ. Առաքելյանը, Ա. Ղազարյանը, Վ. Մելիքսեթյանը, Ս. Ասատրյանը, Ա. Սարգսյանը, Ա. Բաղդասարյանը, Վ. Ղազարյանը խոր ցավակցություն են հայտնում Մուշեղ և Շուշիկ Գևորգյաններին, նրանց սիրելի որդու՝ ՌՈՒԲԻԿԻ վաղաժամ մահվան առթիվ։

Մանյա, Լևոն, Անահ, Լենա, Հենրիկ Աբրահամյանները, Հմայակ, Հրանուշ և Կարլեն Դավթյանները խոր ցավակցություն են հայտնում ընկ. ընկ. Մուշեղ և Շուշիկ Գևորգյաններին, նրանց սիրելի որդու՝ ՌՈՒԲԻԿԻ վաղաժամ մահվան առթիվ։

Սրբանի Մինչուրինի անվան արդեզարծական տեխնիկումի դիրեկցիան, ուսուցչական կազմը և ուսանողությունը ցավակցություն են հայտնում ընկ. Հ. Մարգարյանին, նրա սկեսրոջ ԵԿԱՏԵՐԻՆԵ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ մահվան առթիվ։

Ռեսպուբլիկական մանկամանկական կլինիկայի դիրեկցիան, պարտ. և պրոֆ. կազմակերպությունները ցավակցություն են հայտնում նույն հիմնարկի աշխատակից ՎԱՆՈ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ վաղաժամ մահվան առթիվ։

Հ. Մանգասարյանը, Ե. Քալեյանը, Վ. Ավետիսյանը, Բ. Լալայանը, Ա. Ասլանյանը, Ն. Կարապետյանը, Գ. Գեորգյանը, Վ. Մանուկյանը, Լ. Ազարյանը, Ն. Թորոսյանը, Ա. Քյոսեղյանը և Մ. Սահակյանը խոր ցավակցություն են հայտնում Մուշեղ և Շուշիկ Գևորգյաններին, նրանց որդու՝ ՌՈՒԲԻԿԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ վաղաժամ մահվան առթիվ։

ՎՖ 1723

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԺՈՂԿՈՄՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ԹԵՐԹԵՐԻ ԵՎ ԱՄՍԱԳՐԵՐԻ ՏՊԱՐԱՆ, ԵՐԵՎԱՆ